1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rèdaction „Mschak"
Խմբագրատան տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատողին 20 կոպէկ.
Խմբագրատան տէլէֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄՇԱԿ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1911 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
(39-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը 9 ր., 9 ամսվանը 8 ր., 8 ամսվանը 7 ր., 7 և 6 ամսվանը 6 ր., 5 ամսվանը 5 ր., 4 ամսվանը 4 ր., 3 ամսվանը 3 ր., 2 ամսվանը 2 ր., 1 ամսվանը 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրօպայի բաժանորդները 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, և միևնոյն ժամանակ 40 կոպ. նամականիշ։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա եղած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rèdaction du journal „MSHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Մոսկվայում, ամսիս 11-ին վախճանվեց
ՕՐ. ԹԱՄԱՐԱ ԱՒԵՏԻՍԵԱՆ ՂՈՒԿԱՍԵԱՆԸ,
որի յուղարկաւորութիւնը տեղի կունենայ այսօր, հինգշաբթի, յունվարի 20-ին, առաւօտեան ժամը 10-ին, իր տնից (Միքայէլեան փողոց, տուն № 149), դէպի Վանքի մայր-տաճարը։ Թաղումը այսօր, հինգշաբթի, պատարագից յետոյ Վանքի բակում, տոհմական դամբարանում, որի մասին յայտնում է ազգականներին և ծանօթներին հանգուցեալի մայր ԱՆՆԱ ԽՈՒՆՈՒՆՑ իր որդի Մնացականի, հարսի, աղջկերանց և փեսաների հետ։
Խնդրում են պսակներ չը դնել։ 62. 2—2

ՆԵՐԿ. 28. ԱԲՕՆԵՄԵՆՏԻ ՀԱՇՒԻՑ ԴՈՒՐՍ
ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Հինգշաբթի, յունվարի 20-ին
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
ՏԻԿ. ԴՈՒՐԵԱՆ-ԱՐՄԷՆԵԱՆԻ ԲԵՆԵՖԻՍԻՆ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ
Առաջին անգամ հայ բեմի վրա
ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ
ՀԱՆՐԻ ՆԱՎԱՐԱՑԻ
Դրամա 5 արար., Դեվերէի, թարգմ. Վ. ք. Տէր-Ղևոնդեանի
Մասնակցում են. տ. տ. Ադամեան, Աշխէն, Արաքս, Գուլազեան, Դուրեան-Արմէնեան, Զաբէլ, Ժասմին, Ցասմիկ, պ. պ. Աբէլեան, Ալլահվերդեան, Արմէնեան, Աւետեան, Զարիֆեան, Լաքս, Ղազարեան, Մամիկոնեան, Միրզոյեան, Յարութիւնեան, Նախշաթունի, Ռշտունի, Փիրումեան և ուր.։
Գլխ. ռէժիսեօր՝ Ա. Արմէնեան
Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ 8-ին է։ ✦ Տեղերի գները սովորական օպերային են։
Վարչութեան հերթապահ անդամներ (Տ. Յովհաննիսեան
(Վ. Մամուլեան
տա. 63. 2—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
յայտնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ քաղաքային Ալէքսանդրեան հիւանդանոցում (մորթու և վեներական հիւանդութիւնների) կատարվում է սիֆիլիսի բժշկութիւն պրօֆեսոր Էրլիխի «606» պրեպարատով (Սալվարսան)։ Այդ պրեպարատով բժշկվելու ժամանակ, բացի հիւանդանոցային վճարից—6 ր. իւրաքանչիւր 2 շաբաթվայ համար—հիւանդները վճարում են իսկական արժէքով՝ 3 րուբլի պրեպարատի համար և 1 ր. 50 կ. արեան Վասսերմանի ռէակցիայի կատարման համար։
Տեղեկութիւններ ստանալու համար դիմել այնտեղ նոյն հիւանդանոցի կառավարիչ բժ. Ս. Ս. Իստամանովին, ցերեկվայ ժամը 10-ից մինչև 12-ը։
(ա. օ.) 66. 2—1

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՅՈՒՆՎԱՐԻ 24-ԻՆ
Յօգուտ Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան
ԱՐՏԻՍՏ. ԸՆԿ. ԹԱՏՐՈՆՈՒՄ ԵՒ ԴԱՀԼԻՃՆԵՐՈՒՄ
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ
I
ԹԱՏՐՈՆՈՒՄ, առաջին անգամ—„ԱՐԱ ԵՒ ՇԱՄԻՐԱՄ" դրամատիկական տեսարաններ (կենդանի պատկերներով, երաժշտութեամբ, մելօդեկլամացիայով, երգեցողութեամբ և պարերով) 3 գործողութիւն և 12 պատկեր, իտալացի վիպասան Բարբիէրի վէպից կազմեց Յ. Աբէլեան։
II
ԴԱՀԼԻՃՆԵՐՈՒՄ. «ԴՐԱԽՏ ԵՒ ԴԺՈԽՔ»
բարեհաճ մասնակցութեամբ մի քանի թատերասէր օրիորդների, տիկնանց և պարոնների։
ՇԱՄԻՐԱՄԻ ՅՈՒՒՈՒԹՔԸ
PETITES CHVAUT, տոմբօլա, բուֆէտ, սերպանտին, պօստ, պարեր։
Ներկայացման սկիզբն է երեկ. ժամը 8-ին։
Մուտքի տոմսակն արժէ 2 ր. 20 կոպ., պարտէրի I կարգը՝ 5 ր., գալլերէան՝ 1 ր. 10 կ., պարերեկոյթի տոմսն առանձին՝ 1 ր. 10 կ. ժամը 11-ից յետոյ։
Ով ցանկանում է համարագրած տեղեր ունենալ պարտէրում և օթեակներում, խնդրում են մուտքի տոմսակը փոխարինել համարագրված տոմսի՝ վճարելով վերադիր՝ ամեն մի տեղի համար 1 ր.։ Բալկոնի տեղերը փոխարինվում են առանց վերադիր վճարի։
Տոմսերը համարագրված տեղերի փոխարինելու համար խնդրւում են դիմել Ընկերութեան արհեստանոցը, Гановская № 19, առաւօտեան ժամը 10-ից մինչև ցեր. ժ. 3-ը, իսկ ներկայացման օրը դիմել Արտիստական Ընկերութեան կասսան։
(կ. հ.) 26. 4—3

Հինգշաբթի, յունվարի 20-ին
Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում
կայանալու է
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ և ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
Զբաղմանց առարկաներ.
1) Ստորերկրեայ ջրերի ծագումը եւ ասորա-բաբելական ոռոգման սիստեմը—կը զեկուցանի Գէորգ (նախկին Եղիշէ վարդապետ) Մուրադեանը (կը խօսի ռուսերէն)։
2) Գիւղատնտեսական կրթութեան գործի կազմակերպութիւնը—կը զեկուցանեն Ալ. Քալանթար և Աթանասեան։
3) Բժշկական օգնութեան կարիքը գիւղերում։
Սկիզբն է ժամը 7-ին երեկոյեան։ Կարող են ներկայ լինել նաև կողմնակի անձինք։ (ա) 64. 2—2

ԻՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿՈՒՄ

Մենք յայտնեցինք Պետերբուրգի եկեղեցական խորհրդի այն համակրելի որոշման մասին, որով յատկացվում է 9,000-ական րուբլի կազմակերպելու գիւղատնտեսական դասընթացքներ Ներսիսեան, Երևանի, Շուշու, Ալէքսանդրօպոլի, Ախալցխայի դպրոցների և Գէորգեան ճեմարանի սաների համար։

Այդ որոշումը պէտք է իրագործութիւն ստանայ անմիջապէս ներկայ 1911 թւականին՝ սկսած ամառվայ ամիսներից։

Ինքը՝ Պետերբուրգի եկեղեցական խորհուրդը, որքան մեզ յայտնի է, դեռ լիակատար ծրագիր չէ մշակել նշանակած գումարի գործադրութեան համար և մտադիր է գործի կազմակերպութիւնը և իրագործութեան եղանակների մշակումը յանձնել Հայ Գիւղատնտեսական ընկերութեան։

Այն գեղեցիկ սկզբնաւորութիւնը, որ մեր երկրում դրվել է վերջին տարիները գիւղատնտեսական դասընթացքներ կազմակերպելու գործում՝ այժմ Պետերբուրգի եկեղեցական խորհրդի շնորհիւ ստանում է մեծ զարկ և աջակցութիւն։ Յատկացված գումարը թէև այնքան խոշոր չէ, որ ապահովի գիւղատնտեսական կրթութեան մի մշտական լուրջ կազմակերպութիւն յիշված ասպարեզում նաև, բայց նա մեծապէս կը նպաստէ բեղմնաւոր գործի առաջին քայլերին և ճանապարհ կը բանայ առաջիկայ աւելի ընդարձակ և արդիւնաւէտ գործունէութեան համար գիւղատնտեսական կրթութեան ասպարէզում։

Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական ընկերութեան վարչութիւնը, ստանալով տեղեկութիւն Պետերբուրգի եկեղեցական խորհրդի գեղեցիկ որոշման մասին, հանգամանօրէն զբաղվեց իր հերթական նիստում, յունվարի 18-ին, գիւղատնտեսական դասընթացքների կազմակերպութեան խնդրով և մշակեց առաջին տարվայ գործունէութեան համար մի ամփոփ ծրագիր, որը նա զեկուցանելու է ընկերութեան ընդհանուր ժողովին այսօրվայ նիստում։

Ընկերութիւնը, լինելով մի հիմնարկութիւն, որը արդէն ձեռք է բերել որոշ աստիճան փորձ ու հմտութիւն դասընթացքներ կազմակերպելու գործում և միևնոյն ժամանակ իր կանոնադրութեամբ ունի օրինական իրաւունքներ դասընթացքների համար, հեշտութեամբ կարող է բաւարարութիւն տալ այն ձևական պահանջներին, որոնք կարևոր են նոր գործունէութիւններին սկզբնաւորութիւն տալու համար։

Անշուշտ, անհրաժեշտ կը լինի կազմակերպել մասնագէտ դասախօսների խումբ, ձեռք բերել մի քանի կտոր հող իբրև փորձադաշտ և ցուցադաշտեր, ունենալ գործիքների և ուսումնական պարագաների հաւաքածու, կազմել համապատասխան գրադարան, ունենալ իր տրամադրութեան տակ կենդանիների և արդիւնաբերական ձեռնարկութիւնների որոշ թիւ գործնական աշխատանքներով ապահովելու ուսանողներին և այլն։

Առաջին քայլերը կը հարթեն ճանապարհ ապագայ աւելի ևս մեծ և հաստատ առաջընթացութեան համար։

Եթէ Պետերբուրգի եկեղեցական խորհրդի նախաձեռնած գործը հաստատ արմատներ գցի մեր իրականութեան մէջ, նա ընթացք տուած կը լինի մի խոշոր կուլտուրական գործի, որի կարևորութիւնը մեծ է եղել մեր ժողովրդի համար և որը սկսել է ուժգնապէս զգացվել վերջին տարիներում։

Ա. Քալանթար

ԹԻՒՐՔԻԱՅԻ ՇՈՒՐՋԸ

Մոնաստիր. — Արտասահմանեան հիւպատոսները տուին պարահանդէս, որին հրաւիրված էին վալին և քաղաքապետը։ Պարահանդէսի շքեղութիւնը զարդարված էր արտասահմանեան դրօշակներով։ Իտալական հիւպատոս Բերնարդիի պահանջով Թիւրքական դրօշակը իջեցվեց։ Չը հաւանելով իտալական հիւպատոսի գործելակերպը, ռուսական, ֆրանսիական և յունական հիւպատոսները հրաժարվեցին ներկայ գտնվել պարահանդէսին։ Չը նայած որ իտալական հիւպատոսը ներողութիւն խնդրեց, այնուամենայնիւ նրա վարմունքը չէ դադարում ծառայել կատաղի յարձակումների առարկայ թիւրքերի կողմից, որոնք պահանջում են պաշտօնական ներողութիւն խնդրել և անմիջապէս հեռացնել տալ հիւպատոս Բերնարդիին՝ Թիւրքաց դրօշակը վիրաւորելու համար։ Սպասում են, որ այս միջադէպը կը ստեղծէ դիպլոմատիական միջադէպ Իտալիայի և Թիւրքիայի միջև։

Թիւրքիան բաւարարութիւն տուեց Իտալիայի պահանջին և յետ կանչեց ագիտատոր Պացմանին։

Ֆրանսիան համաձայնել է, որ Թիւրքիայում ապրող ֆրանսիահպատակները հարկեր վճարեն Թիւրքաց կառավարութեան։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոնդոն. — Բոլոր լրագիրները ընդարձակ յօդուածներ են նուիրում մեռած Չարլզ Դիլկի յիշատակին, ընդգծելով, որ ահագին պաշար ունէր պետական կառավարութեան բոլոր հարցերում և ազդեցիկ էր պարլամենտում։ „Times"-ը ասում է. «Դիլկի անկումը նրա քաղաքական կարիէրայի արշալոյսին մեր ժամանակի մեծ ողբերգութիւններից մինն է։ Մեծ մարդը խեղդվեց կեղծ ու պատիր հասարակութիւնից»։

Փարիզ. — Ֆրանսիական մամուլը մեծ նեկրոլոգներ է նուիրում Չարլզ Դիլկին, որ Անգլիայի և Ֆրանսիայի միջև «սրտագին համաձայնութիւն» կապել տալու եռանդուն գործիչներից մինն էր։ Չարլզ Դիլկը իբրև զինուորական թղթակից տեղեկութիւններ էր տալիս ֆրանս-պրուսական պատերազմի մասին։ Նրա փայլուն յօդուածները տպվում են ֆրանսիական մեծադիր թերթերում։ Նա Գամբետտայի բարեկամն էր։ Միայն երկու շաբաթ առաջ Դիլկը, լինելով Փարիզում, այցելեց «Humanité»-ի խմբագրատունը, ուր երկար խօսակցեց Ժօրէսի հետ։ Խօսակցութեան մէջ Դիլկը իրան ցոյց տուեց բանւորական կուսակցութեան կորովի կողմնակից։

Լիսաբոն. — Հանրապետական մամուլը ընդգծում է այն երկպառակութիւնը, որոնք ստեղծվել են ժամանակաւոր կառավարութեան անդամների միջև, առանձնապէս ներքին գործերի մինիստր Ալմէյդոյի և արդարադատութեան մինիստր Կօստոյի միջև, որոնց օրգանները կատաղի բանակռիւ են սկսել։ Վերջին ժամանակներս պաշտօնեաները խմբերով հրաժարական են տալիս։

Լիսաբոն. — Կառավարութիւնը պատրաստւում է զօրքեր ուղարկել գաղութները, ուր միապետականները ազգաբնակութեան մէջ եռանդով պրօպագանդա են մղում յօգուտ միապետութիւնը վերականգնելու։

Մադրիդ. — Կառավարական օրինագիծը կղերական ընկերութիւնների մասին արդէն պատրաստված է։ Այդ օրինագծի համաձայն, արգելվելու են այն վանական համայնքները, որոնց անդամները հեռանում են աշխարհային կեանքից և դառնում են կուսակրօններ, և ընդհակառակն՝ թոյլ է տրվելու այն հոգևոր համայնքների գոյութիւնը, որոնց անդամները չեն ուխտում և նպատակ են դրել օգնել աղքատներին և խնամել հիւանդներին. բայց և այս համայնքներին էլ իրաւունքներ չէ տրվում շահագործել հողեր և ունենալ առևտրական ձեռնարկութիւններ։

Լոնդոն. — Հնդկական մահմեդական լիգայի լոնդոնեան կոմիտէտը դիմեց զինուորական մինիստրին, բողոքելով այն դժուարութիւնների դէմ, որ դրվում են անգլիական զօրքում ծառայող հնդիկների առաջ։

Վլադիվոստոկ. — Կոտօկլի գործի մէջ դատապարտվածները մահապատժին պատասխանեցին «բանզայ» աղաղակներով, իսկ միակ կինը, որ մասնակից էր դաւադրութեան, շնորհաւորեց բոլոր դատապարտվածներին մահապատիժ կրելու համար։ Հետևեալ օրը դատավարից յետոյ կայացաւ, միկադօի հրամանով, մինիստրների խորհրդի գաղտնի նիստը, ուր վճռվեց թեթևացնել 12 դատապարտեալների վիճակը և մահապատիժը փոխարինել ցմահ բանտարկութեամբ։ Ներումն ստացածների թւում են մի կրօնաւոր, մի գործարանատէր, մի վաճառական, հողատէր, երկու բանւորներ, մի բժիշկ։ Մահվան պատժի ենթարկվածների մէջ են դաւադրութիւնը կազմակերպող Կոտօկին, յիշեալ կինը, մի ժուրնալիստ, մի բժիշկ, կրօնաւոր, վաճառական և երեք հողատէր։

Պետերբուրգ. — Կայսերական Ազատ-Տնտեսական Ընկերութեան խորհուրդը բանակցութիւններ սկսեց Կայսերական տեխնիկական, իրաւաբանական, գրական և պատմական ընկերութիւնների հետ՝ միացեալ կերպով հանդիսաւոր նիստ գումարելու գիւղացիների ազատագրութեան յոբելեար տարրով։ Մշակվել է տօնման ծրագիրը։

Պետերբուրգ. — Պետական Խորհրդի մի խումբ անդամներ, գլխաւորապէս աջակողմեաններ, մտադիր են Պետական Խորհրդի մերձաւոր նիստերից մէկում առաջարկութիւն անել կազմելու առանձին մասնաժողով ֆինլանդական օրինագծեր քննելու համար նախ քան Պետական Դումային յանձնելը։ Այս առաջարկութիւնը պատճառաբանվում է նրանով, որ ներկայումս Պետական Խորհրդի անդամները ծանրաբեռնված են հերթական գործերով, մինչդեռ շուտով կը սկսվեն եռանդուն պարապմունքներ բիւջէի և հողային բարեկարգութեան օրինագծի վերաբերմամբ։ Առաջարկութեան նախաձեռնողները ի միջի այլոց յենվում են անցեալ տարվայ գարնանը եղած փորձի վրա։

Լեռնային ինստիտուտի մէջ վերսկսվեցին դասախօսութիւնները ունկնդիրների սովորական թւի ներկայութեամբ։ Ձեռք են առնված նախազգուշական միջոցներ կողմնակի մարդկանց մուտքը արգելելու համար։ Սահմանված է դռնապանների մշտական հերթապահութիւն, որոնք ճանաչում են ուսանողներին դէմքերից. փակված է ինստիտուտի ճաշարանը կողմնակի անձանց համար։

Պեկինից „Нов. Вр."-ին հեռագրում են. «Մինչև յունվարի 10-ը երևան հանվեց ժանտախտի մահվան ութ դէպք։ Դեսպանատան թաղին սպառնում է վտանգ։ Բօկսէրների կռւից աւելի ուժգին։ Տեանցզինում, ամերիկական հիւպատոսարանում, մեռան դարձեալ եօթ չինացիները»։

Ռուսաց սինօդը մինիստրների խորհրդին առաջադրութիւն արեց հաստատել հոգևոր կոնսիստորիաների նոր պաշտօններ։ Դրա համար պահանջվում է 730,425 րուբլի։

Բեռլին. — Միլանում եապօնական հիւպատոսարանի առաջ ցոյց եղաւ եապօնական սօցիալիստների մահապատժի առիթով։ Ամբոխը ընդհարվեց զօրքերի հետ։ Ոստիկանութիւնը կատարեց ձերբակալութիւններ։

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պոլիս, 1 յունվարի

«Տիեզերական» պատրիարքի — յունաց պատրիարքի տիտղոսը — քանի մը համակրական խօսքերը, որոնք լսուեցան հրապարակի վրայ՝ Վեհափառ Հայրապետի մահուան առիթով, առիթներ ստեղծեցին ուրիշ աւելի լայն համակրանքի հայ և յոյն տարրերու մէջ։

Պէտք է ըսել, որ մենք արդէն իսկ ցանկացող եղած ենք միշտ լաւ յարաբերութիւններ ունենալու յոյներու հետ, որոնք, Արեւելքի մէջ մեր դրացիները եղած են և քրիստոնեայ են մեզի պէս։ Թէև տեղ-տեղ և ժամանակ-ժամանակ մոլեռանդութիւնը եռացած է, բայց անպակաս եղած են լուսամիտ եպիսկոպոսներ, միտրապոլիտներ, որոնք պատիւ համարած չեն օրթոդոքս եկեղեցիին՝ յունական մոլեռանդութիւնները։

Համակրականքը երկու դրացի քրիստոնեայ ազգերու մէջ՝ սկսած է Ներսէս պատրիարքի օրով, երբ, իր առաջին պատրիարքութեան ատեն, դարձեալ Ոսկեբերանի աթոռին վրայ կը գտնուէր յոյներու արդի պատրիարքը։ Այլուր մոլեռանդութիւնը, որ մինչև այն ատեն պատմական թշնամութիւնն էր հայերու և յոյներու մէջ, երկու անուան պատրիարքներու գրկախառնութեանը մէջտեղ իսկոյն մեղմացաւ, ու, այնուհետև, սկսան իսկական եղբայրակցութիւն, լաւ յարաբերութիւններ։ Երկու պատրիարքները, Յովակիմ ու Ներսէս, իբրև յոյն և հայ տարրերու անձնաւորութիւններ, երկու խորհրդանշանները եղան հայ և յոյն եղբայրակցութեան։

Առկէ ասդին մէջտեղը եղան ուսումնասիրութիւններ եկեղեցական հարցերու՝ պըսակի, մկրտութեան, պատարագի մասին։ Քիոսի միտրապոլիտը, Գրիգորիոս, ամենէն առաջ իր հեղինակաւոր խօսքերովը ճամբայ բանալ ուզած է երկու ազգերու մէջ եղած կրօնական թիւր ըմբռնումներու մէջտեղ։

Այդ բոլոր շարժումները, պարբերաբար սկսուած ու ընդհատուած, ունեցած են իրենց օգուտը, այնպէս որ այսօր ժամանակագրական անհեթեթ սխալի մը երևոյթը կուտայ հին մոլեռանդութեան ցոյց մը երկու ազգերու մէջ։

Իսկ համերաշխութիւն ու եղբայրութիւն, ուրիշներէ շատ աւելի, անհրաժեշտ ու բնական է հայերու և յոյներու մէջ։ Մենք շատ շուտով կուտանք մեր համակրանքը, որովհետև՝ նախ քիչ մը, համեմատաբար, աւելի զերծ ենք նախապաշարումներէ և մոլեռանդութիւններէ. երկրորդ կը յարգենք յոյները՝ ճանչնալով յոյն ցեղին արժէքն ու կարևորութիւնը։ Երրորդ՝ չենք կրնար մոռնալ, որ Աթէնքը, մեր հալածանքի օրերու մէջ, ապաստարան մըն էր մեր փախստականներուն, և ինչ որ կարելի չէր ըլլար ըսել մեր երկրին մէջ՝ աթէնական հողի վրայ կը գրուէր այն ատեն ու կըսուէր։ Հայերը չեն կրնար մոռնալ ատոնք։

Ատոնց հետ մէկտեղ, մենք ունենք հին բարոյական կապեր ալ յոյներու հետ։ Աթէնքը, Բիւզանդիոնը, մեր հին [illegible] ու եւրոպական ուրիշ մայրաքաղաքներն եղան. մեր ուսանողութիւնը յունական դրօշակի ներքև մարզուած կը դառնար Արարատ՝ իր անուէթին ներքև դրած յունական գործերու հայերէն թարգմանութիւնը։ Այսպէս՝ ժառանգականօրէն, կարելի է ըսել, կը սիրենք յոյները։

Միայն կը մնայ, որ յոյները, իրենք ուզեն ըմբռնել թէ ունեն՝ արևելեան քրիստոնեայ դրացի ազգութիւն մը, որ զիրենք սիրելու իսկական պատճառներ ունեցած է, և որ, միևնոյն ատեն, արժանի է համակրանքի։

Կերևի որ հասկցողներ կան, լուրջ մտածողներ։ Ու մենք պիտի յուսանք միշտ այդ բանը։ «Նէօլոգոս», «Բրօտոս» լուրջ յօդուածներ գրեցին հայ և յոյն յարաբերութեան մասին. երկրորդին մէջ, պատրիարքարանի քարտուղարներէն մին, Աբոստոլիտիս անուն սարկաւագը՝ շատ շահեկան ուսումնասիրութիւն մը գրած է մեր և յոյն եկեղեցիներու մասին։

Սարկաւագը, իր գրածներէն դատելով, կատարելապէս ուսումնասիրած է մեր եկեղեցիին պատմութիւնը։ Կըսէ. «Այսօր տգէտ կը համարուին անոնք, որ կը պնդեն թէ հայերը մեզի պէս օրթոդոքս չեն և կամ հերետիկոս են։ Որովհետև հայերու կրօնքը՝ օրթոդոքս եկեղեցիին Քաղկեդոնի մէջ գումարած ժողովէն (451) առաջ հիմնուած է»։

Սարկաւագը, որ հայերէն ալ գիտէ կըլսուի, չի բաւականանար լոկ պատմական ուսումնասիրութիւն մը գրել, համակրալից հատուածներ ունի. և կարծեմ ատ է որ ամենէն աւելի պիտի կշռէր իր ընթերցողներու վրայ։ Կըսէ. «Հայերը կովկասեան ցեղերու պատկանող անջատ ազգ մը կը ձևացնեն։ Անջատ անցեալի, վիճակի, ապագայի և պատմութեան տէր են անոնք։ Իրենց ազգին ապագան ապահովելու համար՝ իրենց յատուկ ըմբռնելու եղանակ մը ունին։ Մեծ համարձակութեան պէտք չկայ պնդելու համար, թէ հայ ազգին ունեցած անցեալը և արդի վիճակը կարևորութենէ զուրկ չեն»։

Իսկ նոյն թերթի խմբագիրը ինքն ալ համակրանքով կը բանայ իր թերթին սիւնակները։ Կը գրէ. «Մեր ընթերցողները պէտք չէ ուշադրութենէ վրիպեցնեն բնաւ ժամանակին պահանջումներն և ցեղերու համերաշխութեան գաղափարը։ Հայերը, շատ հին ազգ մը ըլլալով, դարերէ ի վեր մեզի՝ յոյներու հետ կապուած են զօրաւոր կապերով»։

«Համերաշխութեան գաղափար»՝ ահաւասիկ ինչոր գրկաբաց կընդունենք մենք։ Կրօնա-պատմական ուսումնասիրութիւնները, որոնք չեն անշուշտ որ այժմ կոչուած ըլլան ճամբայ մը բանալու երկու դրացի ցեղերու մէջ՝ համերաշխութեան գաղափարներու մասին շահերու, քաղաքացիական պարտականութեանց նոյնութիւնն է, որ կրնայ առաւելապէս իրարու օժանդակ ըլլալ մեզ՝ համանման իրաւունքներ պաշտպանելու համար։

Մեր մամուլ, առ այժմ, նոր բան մը ըսած չունի. միայն հաւատարմօրէն արձագանքը կը կրկնէ յոյն թերթերու մէջ գրուածներուն։

Ատով չըլլայ հասկցուի, թէ մենք անտարբեր ենք. ոչ, հակառակը ըլլալով, մենք կը կարծենք, որ պէտք է իրական քայլեր առնուին։ Ու ճիշդ ժամանակն է։

Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԱՄԱՐԱ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ԹԱՂՈՒՄԸ

Այսօր հողին է յանձնվում դեռափթիթ Թամարա Ղուկասեանի մարմինը, տոհմային դամբարանում, Վանքի մայր եկեղեցու գաւթում։

Հանգուցեալը գերեզման է իջնում 16 տարեկան հասակում, չը ճաշակած այն կեանքը, որի վրա նա ունէր այնքան լաւ յոյսեր։

Նա կրթութիւն էր ստանում և դաստիարակվում էր գործելու այն ոգով, որ թելադրված է նրան առատ թողած աւանդութեամբ՝ այն է լինել պիտանի անդամ իր ազգին։

Դժնդակ հիւանդութիւնը, որ բուն էր դրել նրա մատաղ կազմուածքի մէջ, անբուժելի եղաւ։ Դեռ անցեալ տարի նա ենթարկվեց օպերացիայի, և յոյս կար, որ նա կը բժշկվի, բայց հիւանդութիւնը նորոգվեց և այս անգամ այլ ևս անկարող եղաւ ազատվել նրա ճակատագրական ելքից։

Թամարա Ղուկասեանը եղաւ Աւետիք Ղուկասեանի տան վերջին շառաւիղը և չը կարողացաւ անձամբ իրագործել իր հօր փափագները, բայց թողեց մի ժառանգութիւն, մի խոշոր գործ, որ անմահացնելու է նրանց ամբողջ տոհմի անունը։

ՀՆԴԿԱԿԱՆ ՄԵԾ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

Այս օրերս առևտրի ու արդիւնաբերութեան մինիստր Ս. Տիմաշևի մօտ կայացաւ նախնական խորհրդակցութիւն հնդկական մեծ գծի հարցի համար։

Խորհրդակցութեանը մասնակցեցին Մոսկվայի բօրսային կոմիտէտի ներկայացուցիչները, գլուխ ունենալով Գ. Կրեստովնիկովին, առևտրի ու արդիւնաբերութեան, մինիստրութեան, նաև արտաքին գործերի մինիստրութեան ներկայացուցիչները։

Ի պաշտպանութիւն գծի կառուցանողների շահերի հանդէս եկաւ Տիմիրեազևը, որ ապացուցեց յիշեալ գծի կառուցման նպատակայարմարութիւնը և թէ ինչ օգուտ կը տայ նա Ռուսաստանին։

Մոսկվայի բօրսայի կոմիտէտի կողմից մեծ ճառ արտասանեց Գ. Կրեստովնիկովը։ Հռետորի կարծիքով, նախագծվող երկաթուղին ամենավնասակար ազդեցութիւն կունենայ ռուսական առևտրի ու արդիւնաբերութեան շահերի վրա։ Պարսկաստանի շուկան, որ այնպիսի մեծ ջանքերով է ձեռք բերված ռուսական առևտուրի համար, ձեռքից կը գնայ. շնորհիւ հնդկական երկաթուղու, կը տիրանան Անգլիան և Գերմանիան։ Ահա ինչու հռետորը միանում է նրանց կարծիքին, որոնք դէմ են հնդկական մեծ գծի կառուցմանը։

Հետագայ վառ մտքերի փոխանակութեան մէջ մասնակցեցին նաև ուրիշները։

Յունվար ամսին մտադրութիւն կայ կայացնել երկրորդ խորհրդակցութիւն նոյն հարցի առիթով։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Նոր-Բայազէտ, 5 յունվարի

Մեր գաւառում գտնված Բարեգործական Ընկերութեան դպրոցները աննախանձելի դրութեան մէջ են. մի տեղ ժողովուրդն է խոչընդոտներ յարուցանում դպրոցական գործունէութեան դէմ, միւս տեղ ուսուցիչն է իր պաշտօնին անհամապատասխան, երրորդում հոգաբարձութիւնն է երկպառակութիւն սերմանում և այլն։ Կան գիւղեր, ուր հոգաբարձութիւնը ուսումնական տարվայ սկզբին հրաւիրում է դիցուք երկու ուսուցիչների, իսկ մի-երկու ամսից յետոյ կամենում է մէկին յետ տալ, յայտնելով տեղիս ճիւղին, թէ հասարակութիւնը կամ գիւղականները համաձայն չեն երկու վարժապետ պահել, այլ խնդրում են մէկին յետ տանել, քանի որ մէկով էլ կարելի է հոլա տանել «փոքրիկ երեխաներին»...

Կան նաև գիւղեր, որոնց օժանդակութիւնը առաջին տարիներում օրինակ եղել է 3—500 րուբլի, որպիսի գումարը ընկերութիւնը հետզհետէ պակասեցրել է և 2—300 ր. հասցրել. այդպիսի գիւղերում ժողովուրդը ուղղակի շանթահարվում է ասելով, որ չեն ուզում դպրոց պահել, քանի որ առաջին տարիներում, երբ բաւական նպաստ էր յատկացրված գիւղական դպրոցներին, հազիւ հազ կարողացան հոլա տանել մինչև ուսումնական տարվայ վերջը, մինչդեռ ընկերութիւնները (օրինակ Բարեգործականը կամ Կուլտուրականը) հետզհետէ իջեցնում են նպաստների քանակը, ուստի մերժելով մերժում են դպրոց պահել, քանի որ իրանք, գիւղականները, անկարող են միւս ծախքերը հոգալ։ Այնպէս որ շատ գիւղեր ստիպված են լինում իրանց դպրոցների դռները փակել գիւղական խեղճ աշակերտների առաջ, որոնք դեռ նոր նոր են այբուբենի համն առել...

Աւելի ցաւալին այն է, որ գիւղական «պատուելիներից» շատերը ուղղակի իրանք են խոչընդոտներ ստեղծում, այն պատճառով, որ հոգաբարձութիւնը իրանց՝ Կիրակոսի և Մարտիրոսի ձեռքը չէ ընկել, այլ Յովհաննէսի և Մարկոսի և այդ պատճառով աշխատում են գործին վնասել... ինչպէս այդ տեղի ունէր Վալի-աղալու և Ալի-ղուլի գիւղերում։

Խօսք չունենք ասելու, որ թէ Բարեգործ. Ընկ. և թէ Կուլտուրական Միութիւնը իրանց վրա վերցնելով մեր գիւղական դպրոցների օժանդակութեան գործը, կամենում են ընտելացնել գիւղականներին կրթական գործին, որպէս զի ապագայում գիւղացիները սովորեն իրանք տանել այդ գործը՝ առանց կողմնակի նպաստների։ Բայց զարմանալի բան է, որ գիւղացիք ոչնչով չեն ընտելանում կրթական գործի նպատակների հետ։ Մի գիւղ, որ բաղկացած է 200 տնից, անտեսապէս բաւարար դրութեան մէջ, ոչ մի կերպով չէ համաձայնում տարեկան մի-երկու հարիւր րուբլով նպաստել ուսումնական գործին, որպէս զի այդ փոքրիկ գումարով իրանց գիւղում մի դպրոց պահվի, որտեղ կը կրթվեն մայրենի լեզուով մօտ 100 հոգի մանուկներ։

Երևակայեցէք, 2—300 րուբլին մի 200 տուն գիւղի համար մեծ ծախս է համարվում, երբ հարցը դրվում է դպրոցի մասին, որպիսի ծախսը նստում է մի ընտանիքի վրա ոչ աւել և ոչ պակաս՝ մէկուկէս րուբլի։ Այն ինչ այդ նոյն գիւղի իւրաքանչիւր ընտանիքը սովոր է ծախսել «միկիտանխանայում» տարեկան 5—10 ր., որպիսի ծախսը հայ գիւղացին տանում է լուռ ու մունջ, իսկ երբ խնդիրը գալիս է կըրթութեան վրա ծախսելուն,—այդտեղ արդէն ժողովուրդը իրար գլխով է դիպչում և կրքերը բորբոքվում են։

«Չենք ուզում դպրոց,—գոռում են գիւղականները այս ու այն կողմից.—եթէ ընկերութիւնները լաւութիւն են անում մեզ, թող իրանք հոգան բոլոր ծախսերը. մենք չենք կարող մի կոպէկ տալ։ Եւ ինչու մենք փող տանք, Կիրակոսի և Մարկոսի երեխան կարդայ», և այլ այսպիսի անվայել պատճառաբանութիւններ։

Արդեօք, երբ խելքի կը գան մեր գիւղական պատուաւոր անունը կրող երեւելիները, որոնք ժողովրդի ուղեղն են մտնում. թէ «դպրոց բաց անելով իրանց ապագայում մեծ հարկերի և պարտքերի տակ կը գցեն»... Մի աններելի յանցագործութիւն, որը ոչ մի կրիտիկայի դիմանալ չէ կարող...

Որսորդ

ԹՈՒՐՔԱՑ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑ ՄԱԼԻԲԷԿԼՈՒՄ

Անցած սեպտեմբեր ամսում Մալիբէկլու թուրքական գիւղը մեծ հանդիսով բացեց օրիորդաց դպրոց։ Տնտեսական մասը հոգում է պետական գանձարանը։ Դպրոցը բացվել է ահագին ճառախօսութիւնների, ցոյցերի, ուրախութիւնների և շնորհաւորութիւնների ազդեցութեան տակ։ Դպրոցի պատի վրա խոշոր տառերով գրըված ցուցատախտակը այսպէս է ասում „Малыбеклинское женское училище"։

Գանձակի նահանգի դպրոցական վարչութիւնը այդ դպրոցի համար ուղարկել է մի ռուս վարժուհի։ Դպրոցում հաւաքվել են 40-ից աւելի օրիորդներ։ Մալիբէկլուն 160 տնից է բաղկացած։

Ղարաբաղում Մալիբէկլուի օրիորդաց դպրոցը առաջինն է։ Շուշի քաղաքը, որտեղ են նստում Ղարաբաղի խանզադաների, խաների, բէկերի ժառանգները, ահագին կալուածների տէրերը, այսօր իսկ չունեն սեփական օրիորդաց դպրոց. եղած մի քանի օրիորդները սովորում են պետական օրիորդաց դպրոցում։ Սովորութիւնը վերևից է գալիս, օրինակը գիտակից հասարակութիւնն է տալիս, բայց Մալիբէկլուն ամենից առաջ է ընկել, նա՝ ջարդ ու փշուր է անում մի ահագին ամուր պատնէշ։ Մալիբէկլուեցիները անխտիր բեռնակիրներ են, դրանք վաղուց ի վեր իրանց ֆուրգոններով ապրանք էին տեղափոխում Բագուից Շուշի և Շուշուց Բագու։ Երկաթուղին կառուցվելուց յետոյ, նրանք իրանց ֆուրգոններով աշխատում են Շուշի—Եւլախ ճանապարհի վրա։ Այդ ֆուրգոնչիները ամենից առաջ ընկան, ամենից առաջ հասկացան, որ գիտակից ժողովուրդ, ընտիր հասարակութիւն կազմելու համար պէտք է ունենալ դրա համապատասխան մայրեր, և նրանք փշրելով մի միջնադարեան ահագին շղթայ, բացեցին օրիորդաց դպրոց։

Թէ ինչ է պատճառը, որ մեր հարևան Թուրքերը խոյս են տալիս իրանց իգական սեռին կրթութիւն տալուց, աշխատենք իրողութիւնը առանց դատողութեան, դնել հասարակութեան առաջ։

Հոկտեմբերի 26-ին, Խանքենդումն էր Գանձակի նահանգի դպրոցների տեսուչ Ձեգդինիձէն. եկել էին այցելելու տեղական դպրոցներին։ Այդտեղ են և Մալիբէկլուի տղայոց դպրոցի աւագ ուսուցիչը իր օգնականով, օրիորդաց դպրոցի ռուս վարժուհին և 30-ից աւելի թուրքեր։ Թուրքերը եկել էին գանգատվելու։ Տեսուչը ընդունում է նրանց։ Նախ խօսում է օրիորդաց դպրոցի տանտէրը. «Աղա, տան վարձը շատ քիչ ես նշանակել, ես ապրել չեմ կարողանում, խնդրում եմ մի փոքր աւելացնես վարձը»։

Տեսուչը պատասխանում. «Շարունակ դու գանգատվում ես, որ տան վարձը քիչ է. ես գանձարանի հաշուին շինել տուի տան պատուհանների ապակիները, խօսած 125 ր. վարձը բարձրացրի 135 ր., այժմ էլի դըժգոհ ես. նորից վարձը դարձնում եմ 150 ր. տարին, տան ներքևի յարկում էլ ինքդ ապրիր և այլևս չը խօսես»։

Խօսում է երկրորդը «Աղա, մեր գիւղում բաց ես արել օրիորդաց դպրոց, ուղարկել ես մի ռուս վարժուհի, սա շարիաթի հակառակ է գնում։ Շաբաթը 2—3 օր գնում է Խանքենդի, այնտեղից էլ օֆիցէրներ են գալիս և մտնում դպրոցը. վախում են մեր աղջիկները, փախչում են տուն, կամ չադրաներ չեն տանում, որ օֆիցէրները դըպրոց մտած ժամանակ երեսները ծածկեն, սա շարիաթի հակառակ է, խնդրում ենք այդ վարժուհուն հեռացնես, որ Խանքենդի օֆիցէրները այլ ևս չը գան մեր գիւղը»։

Խօսում է նախկին տանուտէր Մաշադի Նաջաֆը. «Աղա, քեզ յայտնի է, որ իմ աշխատանքով և յորդորանքով բացվեց Մալիբէկլուի տղայոց դպրոցը, պակաս աշխատանք չեմ գործադրել և օրիորդաց դպրոցի համար, դրա համար մեր գիւղացիները շարունակ հայհոյում են ինձ և ծնողներիս, թէ ինչու եմ բաց արել այդ դպրոցները և այսօր իսկ ինձ սպառնալիք են տալիս և ուզում են սպանել։ Սրանք եկել են, որ օրիորդաց դպրոցը փակել տան, ես տղայ չունեմ, որ տղայոց դպրոցում սովորի, Աստուծոյ ինձ տուածները բոլորն էլ աղջիկներ են, ես էլ ուզում եմ իմ աղջիկներիս ուսում տալ. հիմա որ սրանք ուզում են օրիորդաց դպրոցը փակել տալ, ես էլ խնդրում եմ երկուսն էլ — օրիորդացը և տղայոցը—փակել տաս, որ մեր գիւղում խաղաղութիւնը վերականգնվի, ապա թէ ոչ մարդասպանութիւն է լինելու»։ Նաջաֆի այս խօսքերից յետոյ, ներկայ եղող Թուրքերի մէջ մեծ իրարանցում, գոռիւն-գոչիւն բարձրացաւ, ամենքն էլ իրանց տեղից բարձրաձայն խօսում էին և, ոչ ոք, ոչ ոքի չէր կարողանում հասկանալ։ Հասկանալի էր այսքանը, որ ժողովուրդը ցանկանում է տղայոց դպրոցը պահել, իսկ ուզում է փակված տեսնել օրիորդաց դպրոցը, որ շարիաթի հակառակ է։ Տեսուչը դժուարութեամբ խաղաղացրեց նրանց և նորից կարգը էր խանգարելու համար, այլևս թոյլ չը տուեց Նաջաֆին խօսելու, խօսում է մի ուրիշը։

«Աղա, մեր գիւղում բաց են արել օրիորդաց դպրոց, մենք էլ սիրով ուղարկել ենք մեր աղջիկներին սովորելու, բայց Խանքենդի զօրքի օֆիցէրները գալիս են մեր գիւղը, վարժուհու մօտ, մտնում են դպրոցը, մեր աղջկերքը վախենում են. ահա անցեալ օրը նրանք դպրոցից փախչելու ժամանակ, սանդուխքներից երկու հոգի վայր են ընկել և ոտքերից վնասվել են, խնդրում ենք այդ վարժուհուն հեռացնել և դպրոցը փակել, որովհետև շարիաթի հակառակ է»։ Խօսում է միւսը.—«Աղա, անցեալ օրը մի օֆիցէր եկել է վարժուհու մօտ, ձին կապել գոմում, ապա գնացել պրիստաւին գանգատվել, թէ մալիբէկլուեցիները գողացել են ձիուս փոքքաշները։ Ախր, օֆիցէրը մեր գիւղում ինչ ունի, որ յետոյ գնայ մեզ զրպարտի պրիստաւի առաջ. խնդրում ենք այդ վարժուհուն հեռացնես և դպրոցը փակես. շարիաթը հակառակվում է օրիորդաց դպրոց բանալ»։ Ապա խօսում է գիւղի տանուտէրը. «Օֆիցէրները, որ եկել մտել են դպրոցը, աղջկերքը ծղլթալով փախել են. երկու հոգի վայր են ընկել և վնասել ոտները։ Դպրոցը մնացել էր առանց օրիորդների. այդ օրը պրիստաւը եկաւ և հրամայեց ինձ ստրաժնիկների հետ միասին մտրակներով դուրս քշել օրիորդներին տներից և տանել դպրոց, բայց այդ էլ չաջողվեց, օրիորդները չեկան դըպրոց։ Դպրոցների տեսուչը խիստ յուզվեց լսելով այդ և նկատեց. «Ինչպէս կարելի է մտրակներով աշակերտուհիներ ժողովել. այդ դէպքում սէրն ու փաղաքշանքն է հարկաւոր և ոչ մտրակը»։

Տեսուչը մի քանի րոպէով Թուրքերին խնդրեց հեռանալ, մինչև որ ինքը իր լսածների մասին արձանագրութիւն կը կազմի և կը հրաւիրէ նրանց ստորագրել։

Դպրոցի բակում կրօնուսոյց հայ քահանան խօսում է Թուրքերի հետ. «Իմ հարևաններ. բաղդը ձեզ բերել է և տէրութիւնը իր գանձարանի հաշուով ձեր գիւղում օրիորդների դպրոց է բացել ձեզ համար. ապագայ մայրեր պատրաստելու համար, բայց դուք ձեր ձեռքով քանդում էք ձեր տները, պատճառ բերելով, որ շարիաթը հակառակ է օրիորդներին կրթութիւն տալուն։ Շատ սխալւում էք, շարիաթը այդպիսի բացարձակ հակառակութիւն չի ցոյց տալ և ահա թէ ինչպէս։ Միթէ ձեր մէջ չը կան մարդասպաններ, գողեր, հրձիգներ, թալանչիներ, թղթախաղին մոլի երկրպագուներ և այլ վատաբարոյ անձինք։ «Կան, կան», լսվում է ամեն կողմից։ Եթէ այդպիսի անձինք ձեր մէջ էլ կան, միթէ նրանց քաջալերում և խրախուսում է շարիաթը»։ «Ոչ, ոչ, շարիաթը նրանց հակառակ է»։ «Եթէ շարիաթը նրանց հակառակ է, շարիաթը արգելում է նման յանցագործութիւնները, ուրեմն ինչպէս կարող է նա հակառակ կանգնել օրիորդների դաստիարակութեանը, երբ դրանք ապագայի կրթված մայրեր պիտի լինեն և պիտի իրանց զաւակներին դաստիարակեն, որ մարդասպանութիւնը, գողութիւնը, հրձիգութիւնը, թալանչութիւնը և նման բաները յանցանքներ են, հեռու լինեն այդպիսի բաներից և արդար աշխատանքով ապրուստ հայթայթեն։ Դուք Եւրոպան չէք ճանաչում, բայց շատ լսած կը լինէք Ֆրանսիայի և Անգլիայի մասին և աշխատում սրանց ապրանքներից առնել, որովհետև ամուր և պինդ են։ Սրանց մէջ տարվայ ընթացքում շատ հազուագիւտ բան կը լինի, եթէ մարդասպանութիւն պատահի, բայց այդ բանը մեզանում սովորական բան է և բանտերը լիքն են այդպիսի յանցագործներով. ինչու. որովհետև նրանց մայրերը կրթված կանայք են, իսկ մերոնք խաւար։ Նրանց մայրերը իրանց որդոց դաստիարակում են, իսկ մերոնք ոչ թէ չեն դաստիարակում, այլ նոյնիսկ դժբաղդացնում են, որովհետև իրանք էլ խաւար են. այս ամենից յետոյ ինչ էք կարծում, միթէ շարիաթը հակառակ լինելով օրիորդների կրթութեանը, նա կը խրախուսէ, որ ձեր աղջկերքը խաւար մնալով, ձեր որդիքն էլ լինեն դժբաղդ մարդասպաններ և նման յանցագործներ. չեմ կարծում. երբ շարիաթը հակառակ է մարդասպանութեան և գողութեան, նա հակառակ լինել չէ կարող, որ ընտիր ժողովուրդ պատրաստելու համար ընտիր մայրեր ունենանք։ Ուրեմն խնդրեցէք պ. տեսչին, չը փակել այդ դպրոցը, այլ ուղարկել մի ուրիշ վարժուհի, և դուք բաւականացէք դրանով, մինչև որ ձեր աղջիկները բարձրագոյն կրթութիւն կունենան և իրանք կը լինեն ձեր վարժուհիները»։

Ժողովուրդը որոշում է խնդրել տեսչին, փոխել այժմեան վարժուհուն և ուղարկել մի ուրիշին ու բանալ Մալիբէկլուի օրիորդաց դպրոցի դռները։

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՐՈՒԱԳԻԾԸ

(Սալտիկով-Շչեդրինի ծննդեան 85-ամեակի առիթով)

Մարդկային միտքը առաջադիմելով, շարունակ ձգտել ու ձգտում է նոր ուղիներ բանալ և կործանել այն պատնէշները, որոնք զանազան երևոյթների էութիւնն ու պատճառը նրա հայեացքից ծածկել ու անըմբռնելի են դարձրել։ Հնադարեան հլու և խոնարհ բանականութիւնը, որ համերաշխ ամօթխածութեամբ համագործակցում էր իր շրջապատի հետ, դեռ շատ դարեր առաջ աշխատել է մի կողմ շպրտել իր փտած և անբաւարար «նախապաշարումները» զանազան իրերի կամ երևոյթների մասին և ձգտում է անողոք քննադատութեան ենթարկել նախկին դոգմայական հասկացողութիւնները և այդ բոլորը իմացութեան մի նոր ու իբր աւելի հաստատուն շէնքով հիմնաւորել... Սկզբնական մարդը, որ իր շուրջը սփռված բազմաթիւ երևոյթներին շատ համերաշխ աչքով էր նայում, այժմս կարծես յեղաշրջվել և ամեն ինչի այլ աչքով է նայում, այլ կերպ տեսնում, այլ կերպ ըմբռնում։ Այսպէս նա, որ առաջ սովոր էր քարն իբրև քար տեսնել ու հասկանալ, կարմիրն իբրև այդպիսին ճանաչել, այժմս, կարծես մի տարօրինակ փազից անցած լինելով, քարն իբրև քար ժխտում, բացասում է, կարմիրն իբրև անգոյն եթերի, էլեքտրօնի ալիքներ հաշւում և վերջապէս այնպիսի բացատրութեան և ամեն ինչ բացասելու մէջ է մտնում, որ սկզբնական մարդու համար շատ նաիվ, տարօրինակ և ծիծաղելի պիտի երևար։ Եւ յիրաւի՝ ինչպէս հասկանալ այն, թէ տարածութիւնը ճապէս ոչնչութիւն է, որ ժամանակը լոկ սխալ երևակայութիւն է. ինչպէս ժխտել այն սուբստանցը, որին հնում տիեզերքի և կեանքի աղբիւր և հիմնադիր էին հաշւում, սկիզբն ու պատճառը նրան վերագրելով...

Մարդկային միտքը դառն կասկածով ու թերահաւատութեամբ սկսեց նայել հազարաւոր տարիների ընթացքում հիմնաւորում ստացած սօցիալական կեանքի և մարդկային յարաբերութիւնների նպատակայարմար ու խոհական լինելուն և անդադար հարցեր է տալիս, թէ միթէ այն պիտի հաշւել ճըշմարիտը և տիեզերական նպատակին մօտեցնողը, ինչ որ ներկայ մարդկութիւնից է ընդունված իբրև այդ նպատակին ծառայողը, թէ ընդհակառակը՝ կեանքի նպատակը ներկայ տնտեսական, քաղաքական, բարոյական և այլ կարգերին և տիրող հայեացքներին հակառակ ընթանալու մէջ է գտնըվում, և որ ամեն ոք նպատակայարմար գործելու համար, փոխանակ պայմանաւորված ու սխալ ըմբռնած բարիքի, պիտի չարիք գործէ, փոխանակ օգնութեան, կարեկցութեան, ողորմածութեան՝ պիտի հարուածէ, յափշտակէ և անգութ ու դաժան լինէ։ Միթէ տիրող կարգերը, ներկայ բարոյականութիւնը, գիտութիւնը և կուլտուրայի հազար ու մի «բարիքները», մարդկային մտքի արդիւնք լինելով, չեն կարող թերի, սխալ, կործանիչ լինել և դրանցից իւրաքանչիւրը մի-մի չարիքներ չեն։ Ահա սոյնանման մի շարք կասկածներ-հարցեր պատմական անհրաժեշտութեամբ առաջ են եկել և ձգտում են հիմնպատակ անել մինչև այժմ տիրող բաղմաթիւ հայեացքներ ու կարգեր։ Այս հարցերի թւումն է նաև բարոյականութեան մասին եղած հայեացքը՝ թէ ինչ է՞ բարոյականութիւնն ու սրա գաղափարը, արդեօք մարդս սխալ չի՞ հասկացել ու սահմանել…

Այս մասին կան շատ տեսութիւններ, որոնք թէև ընդհանրապէս համակերպվում ու միանում են, բայց և երբեմն միմեանց բաղխվում ու հակասում են։ Եւ յիրաւի՝ կեանքում շատ երևոյթների կը հանդիպենք, որոնք մի տեղ իբրև անբարոյականութիւն պարսաւվում են, իսկ մի ուրիշ տեղ իբրև բարոյական պարտք է համարվում։ Այսպէս, հաղորդվելիս գինի խմելը քրիստոնէի համար մի սուրբ պարտականութիւն է, իսկ մահմեդականին գինին ամեն. դէպքում էլ խստիւ արգելվում է. սպանութիւնը, որ ընդհանրապէս անբարոյականութիւն է խղճի որոշմամբ, պատերազմի և մենամարտի ժամանակ իւրաքանչիւր ոք դա իր միակ պարտականութիւնն է հաշվում։

Ընդհանրապէս այսպէս են բնորոշում բարոյականութիւնը՝—«Բարոյական է ամեն մի գործողութիւն, որ տանում է դէպի կեանքի նպատակը» կամ «բարոյական է այն, ինչ որ օգնում է մարդկութեան առաջադիմելուն եւ երջանկութեանը եւ անբարոյական է այն ամենը ինչ որ դրանց հակառակ է գործում»… Բարոյականութեան հէնց այս բնորոշումները կարծես ձգտում են ասելու թէ՝ ամեն ինչ բարոյական է եւ ոչինչ բարոյական չէ։ Ըստ երևոյթին սա մի պարադոքս կերևայ, բայց մի քիչ եթէ խորը քննելու և վերլուծելու լինենք այդ բնորոշումները, կը տեսնենք որ դրանցից տրամաբանական ճիշդ հետևողութեամբ ծագում է այդ պարադոքսը. որովհետև, ինչ է նշանակում թէ՝ «տանում է դէպի կեանքի նպատակը»։ Ըստ ներկայ հասկացողութեան դա նշանակում է և ամեն ինչ և ոչինչ, որովհետև այն ինչ ես կեանքի նպատակ եմ ընդունում, դու շատ չնչին բան ես հաշվում. այն, ինչ որ դու ես իբրև այդպիսին հաշվում, մի ուրիշը այդ միանգամայն մերժում և մի ուրիշ բան է համարում կեանքի էութիւնը, և այսպէս անվերջ։ Ճիշդ այսպէս անորոշ է և երկրորդ բնորոշումը, որովհետև առաջադիմութիւն և երջանկութիւն բառերը իրանք շատ առաձգական և աղօտ լինելով, չափազանց մութ են թողնում նաև դրանց հասնելու միջոցները, ուրեմն և բարոյական գործողութիւնները. վերջապէս, որովհետև առաջադիմութիւն և երջանկութիւն բառերի ներկայ բնորոշման ստուգութեան վրա, իբրև մարդկային մտքի արտադրութեան վրա, կարելի է կասկածել, ուրեմն և անխուսափելիօրէն կասկած պիտի առաջանայ դէպի նրանց տանող միջոցների բարոյական և նպատակայարմար լինելու վերաբերմամբ։

Legatum

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Հրաւիրում ենք Թիֆլիսի մեր ընթերցողների ուշադրութիւնը Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան այսօրվայ նիստի վրա, որտեղ պէտք է քննվեն մի քանի կարևոր խնդիրներ։ Գ. Մուրադեանի (նախկին Եղիշէ վարդապետի) զեկուցումը վերաբերում է մի հին, նոյն իսկ հնագոյն խնդրի, որը սակայն միշտ եղել է ժամանակակից և կենսական խնդիր. դա ջրի մատակարարութեան խնդիրն է։ Զեկուցանողը գլխաւորապէս հետաքրքրված է ստորերկրեայ ջրերի շահագործման խնդրով։ Միւս զեկուցումները վերաբերում են գիւղատնտեսական կրթութեան գործին, որը մանաւանդ հերթական է դարձել Ժամհարեանների և Պետերբուրգի եկեղեցական խորհրդի նուիրաբերութիւններից յետոյ։ Նիստին կարող են ներկայ լինել օտար անձեր։ Սկիզբն է 7 ժամին երեկոյեան։ Նիստը տեղի կունենայ Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում, Ալէքսանդրեան այգում։

◆ Ա. Քալանթար, որ մասնակցել էր անցեալ տարվայ սեպտ. ամսին Պետերբուրգում կայացած համառուսական կենդանաբուծական համագումարին, այժմ հրաւէր է ստացել երկրագործական դեպարտամենտի կողմից մասնակցելու այն համագումարին, որ պէտք է կայանայ Պետերբուրգում փետրվար ամսին։ Այդ համագումարի նպատակն է մշակել կենդանաբուծութեան բարւոքման եղանակներ և ուսումնասիրութեան ընդհանուր մեթօդներ։

◆ Քաղաքային գործերի համար սահմանված նահանգական ատեանը թոյլատրել է Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան ծախսել հնդկական ժանտախտի դէմ կռւելու գործի համար քաղաքին պատկանող պահեստի գումարից մօտ 7,000 րուբլի։

◆ Երէկ երեկոյեան Ղուկասեանների տանը կատարվեց հանդիսաւոր հոգեհանգիստ հանգուցեալ Թամար Աւետիսեան Ղուկասեանի համար։ Ներկայ էին բացի ազգականներից, քաղաքի բոլոր խաւերի ներկայացուցիչներ։

◆ Հայկանոյշ և Ռոստոմ Մարտիրոսեանները վաղամեռիկ Թամար Ղուկասեանի վրա պսակ դնելու փոխարէն նուիրեցին Հայոց Ազգագրական Ընկերութեան 25 ր.։

◆ «Alliance Française» ընկերութեան երեկոյթները հետզհետէ աւելի ժողովրդականութիւն են ստանում։ Յունվարի 18-ի երեկոյթը գրաւել էր թէ անդամների և թէ հիւրերի մեծ բազմութիւն. դահլիճը ծայրէ ծայր լիքն էր։ Ֆրանսերէն լեզուով ներկայացված երկու զուարճալի կատակերգութիւններն էլ շատ լաւ անցան. երևում էր, որ սիրողները զգալի առաջադիմութիւն էին արել։ Հասարակութիւնը գոհ սրտով հեռացաւ երեկոյթից։ Հետևեալ երեկոյթը տեղի կունենայ դարձեալ Բօրսայի դահլիճում, 15 օրից յետոյ։

◆ Կովկասի Փոխարքան հնարաւոր չը գտաւ թոյլ տալու Գանձակի հողատէրեր Համիդ-բէկ Զուլղադարօվին և ուրիշներին գումարել գաւառական և Գանձակ քաղաքի հողատէրերի համագումարներ՝ հողատիրական կարիքների մասին խորհրդակցելու նպատակով, որովհետև համագումարների մէջ նախագծված քննելի հարցերը ըստ էութեան հանդիսանում են օրէնսդրական առաջադրութիւններ, որոնց մասնաւոր անձինք իրաւունք չունեն յարուցանել։

◆ Գանձակի քաղաքային դուման միջնորդել էր Կովկասի Փոխարքայի առաջ, որպէսզի առևտրա-արդիւնաբերական հաստատութիւնների մահմէդական ծառայողների վերաբերութեամբ կիրակնօրեայ և քրիստոնէական տօների հանգիստը չը գործադրվի։ Փոխարքան հնարաւոր չը գտաւ բաւարարութիւն տալու յիշեալ միջնորդութեան։

◆ Փոխարքան թոյլ տուեց Բագուի քաղաքային ինքնավարութեան նախահաշւով 40,000 րուբլի յատկացնել պահեստի գումարներից խօլերայի դէմ մաքառելու նպատակով կատարած ծախքերը ծածկելու համար։

◆ Շարունակվում են Կովկասի Փոխարքայի խորհրդի նիստերը ամեն օր, զէմստվային նախահաշւի քննութեան համար։

◆ Թիֆլիսում, Ալէքսանդրեան ուսուցչական ինստիտուտում բացվեցին երեկոյեան մանկավարժական դասընթացքներ՝ ժողովրդական դպրոցների ուսուցիչներին դասաւանդութեան լաւագոյն եղանակների հետ ծանօթացնելու համար։

◆ Բժշկապետ Վ. Արծրունին նուիրեց Հայոց Ազգագրական Ընկերութեան Կովկասագիտական-Մարդաբանական գրադարանին Ռեկլիւի Համաշխարհային Աշխարհագրութեան բազմահատոր հրատարակութեան բնագիրը, Փիթօյեանի առևտրական տունն էլ՝ Լինչի «Арменія» երկհատոր երկը։

◆ Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութեանը Թովմաս Խանդալեանը նուիրել է հարիւր րուբլի իր հանգուցեալ մօր յիշատակին։

◆ Նախագծվում է կառուցել քաղաքի հաշւով սեփական շէնք քաղաքային ծննդաբերական ապաստարանի համար։

◆ Տիգէմանը նշանակվել է գերմանական հիւպատոս Բագւում։

◆ Լոյս յունվարի 17-ի գիշերը «Վետցել» հիւրանոցը մտաւ մի օֆիցեր և վարձեց 27-րդ համարը։ Որովհետև նա մինչև երեկոյեան ժամը 7-ը դուրս չեկաւ, այդ մասին յայտնվեց ոստիկանութեան։ Պրիստաւը վարպետի օգնութեամբ կոտրեց համարի դուռը և մտաւ ներս. նրա աչքի առաջ պատկերացաւ սոսկալի տեսարան. օֆիցերը ինքնասպանութիւն էր գործել. նրա կողքին ընկած էր «Նագան» սիստեմի ատրճանակ և մի նամակ հետևեալ բովանդակութեամբ. «Ես, Կովկասեան սապեօրների գնդի պօրուչիկ Պավէլ Իվանովիչ Գլուխօվս, առողջ դատողութեամբ և լիակատար յիշողութեան մէջ կրակում եմ ճակատիս»։

◆ Ընթերցողը թող չը զարմանայ, եթէ ասենք, որ այնպիսի մի մեծ և հասարակական հիմնարկութեան մէջ, ինչպիսին է Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը, մինչև օրս գործավարութիւնը կատարվել է հաշւապահական պարզ եղանակով։ Եւ այժմ միայն քաղաքի ղեկավարները մտածում են խտալական կրկնակի հաշւապահութիւն մտցնելու մասին։ Այդ նպատակով մի ամսով արձակուրդ է տրվում վարչութեան գլխաւոր հաշւապահին որպէս զի նա գնայ և սովորէ կրկնակի հաշւապահութիւն։

◆ Ջայնաւոր Ս. Բաբեանը քաղաքային վարչութեանը ներկայացրել է մի պատճառաբանեալ գրութիւն, որի մէջ ապացուցանում է, թէ էլեքտրական կայարան հիմնելը շահաւէտ չէ քաղաքին։

◆ Կովկասեան դեղատան ընկերութեան մէջ ձրիաբար տրվում է մի հանրամատչելի բրօշիւր ժանտախտի և նրանից պաշտպանվելու եղանակների մասին։ Բրօշիւրը կազմել է քաղաքային սանիտարական-բժշկական տեսուչ Կար. Ստեփանեանը, դիւրըմբռնելի լեզուով։

◆ Քութայիսում, Բաթումում, Գանձակում, Նոր-Բայազէտում և Երևանում անչափ ձիւն է եկել, որի պատճառով հաղորդակցութիւնը դժուարացել է մի քանի տեղում։

◆ Որովհետև մինչև յունվարի 23-ը պատրաստ չի լինիլ Ժողովրդական Համալսարանի ընկերութեան վարչութեան մանրամասն հաշիւը ընկերութեան բովանդակ գործունէութեան մասին, ուստի ընդհանուր ժողովը յետաձգվում է փետրվարի 13-ին։

◆ Դերասանուհի Զաբէլի 30-ամեայ բեմական գործունէութեան յօբելեանի տօնակատարումը յետաձգվում է առաջիկայ 1911/12 թ. թատերաշրջանին։

ՄԱՄՈՒԼ

Քանի որ այժմ մամուլի մէջ բազմակողմանի քննադատութեան առարկայ է դարձել Կարապետ եպիսկոպոսի հրաժարականի խնդիրը, անտեղի չենք համարում առաջ բերել այստեղ Մարկոս Դօլուխանեանի կարծիքը, որ տպված է «Հովիտ» շաբաթաթերթի մէջ (№ 2), իբրև մի բոլորովին չէզոք անձի։

Խնդիրը ծագեց նրանից, որ «Հորիզոն» թերթը աշխատեց Իզմիրլեան Կաթողիկոսի հիւանդութիւնը և նրան հետևող մահը բացառապէս վերագրել Կարապետ եպիսկոպոսին, և հասաւ այնտեղ, որ ոչ միայն «Հայրապետասպանութեան» մեղադրանքը բարձեց Կարապետ եպիսկոպոսի վրա, այլ և աշխատեց նրա դէմ գրգռել ամբոխի ֆանատիկոսական զգացումները և մի տեսակ պօգրօմի կոչ անել Կարապետ եպիսկոպոսի դէմ։ Ապագայում խնդիրը պարզվեց և ստացաւ այն կերպարանքը, որ իսկապէս ունէր և որ արտայայտվեց Էջմիածին թաղման գնացած պատգամաւորների ժողովի հետևեալ որոշման մէջ.

«Կարդալով Կարապետ եպիսկոպոսի հրաժարականը Ատրպատականի թեմի առաջնորդութիւնից, պատգամաւորական ժողովը իր վիշտն է արտայայտում այնտեղ կիրառած մի քանի անպատշաճ խօսքերի ու արտայայտութիւնների նկատմամբ։ Բացի այդ լսելով միաբաններից ոմանց և Էջմիածնի իրականութեանը մօտ տեղեակ մի քանի անձերի ծանուցումները միաբանութեան մէջ տիրող ներկայ տխուր իրականութեան մասին, ժողովս յայտնում է իր խորին վիշտը այդ առիթով. 20 դեկտ. 1910 թ. Էջմիածին»։

Այս որոշումը պարզ ցոյց է տալիս, որ Կարապետ եպիսկոպոսի վարմունքը հանդէպ Կաթողիկոսի վայելուչ չէ եղել և կարգապահական տեսակէտից պախարակելի է, բայց սրբում է նրանից միանգամայն այն հրէշաւոր մեղադրանքը, որ «Հորիզոնը» աշխատում էր փաթաթել նրա վզին։

Միևնոյն ժամանակ հաստատված է և այն փաստը, որ Էջմիածնի միաբանութեան մէջ տիրող կարգերն ևս արժանի են պախարակման։

Մարկոս Դօլուխանեանի կարծիքը, կարելի է ասել, հանրական կարծիք է և պէտք է արդարև ցաւ յայտնել, որ Կարապետ եպիսկոպոս թոյլ է տուել իրան այդպիսի վարմունք։

Ահա Մարկոս Դօլուխանեանի գրածը.

«Ներկայ թւականի «Հովիտ» շաբաթաթերթի առաջին համարում տպված առանձին թերթի վրա, իբրև յաւելուած՝ Կարապետ եպիսկոպոսի հրաժարականը անշուշտ այն միտքն ունի, որ ամեն մի հայ կարդալով այդ հրաժարականը կարողանայ գաղափար կազմել, թէ արդեօք իրաւացի՞ է այն լուրը, որ տարածված է հասարակութեան մէջ՝ իբր թէ Կարապետ եպիսկոպոսը իր վարմունքով խիստ վիրաւորել է ի Տէր հանգուցեալ Կաթողիկոսին՝ մինչ այն աստիճան, որ հանգուցեալի հիւանդութիւնը կրկնվել է։

«Որովհետև այդ հրաժարականը հրապարակի վրա է, ուրեմն ամեն մի հայ կարող է իր կարծիքը յայտնել Կարապետ եպիսկոպոսի մասին, առանց դիպչելու Նորին Սրբազնութեան պատուին, ի նկատի ունենալով միայն կատարված փաստը և վերաբերվելով այդ փաստին կորրեկտ կերպով։

«Այդ տեսակէտից նայելով Կարապետ եպիսկոպոսի վարմունքին, ես չեմ կարող չարտայայտել իմ զգացմունքը Նորին Սրբազնութեան վարմունքի մասին դէպի հանգուցեալ Կաթողիկոսը՝ հետևեալ պատճառներով։

«Առաջինը՝ ինչ կարիք կար պաշտօնական թղթի մէջ կրկնել այն խօսակցութիւնը, որը դէմ առ դէմ տեղի է ունեցել Կաթողիկոսի և նրա ստորագրեալ եպիսկոպոսի միջև։

«Երկրորդ՝ վայել է արդեօք հայ եպիսկոպոսին հետևեալ յանդիմանական և խրատական խօսքերը ուղղված առ Օծեալ Հայրապետն Ամենայն Հայոց։ Ահա այդ խօսքերը. «Թէ ինչպէս պատահել է Ձեզ կողմնակի ազդեցութեանց շնորհիւ Ձեր իսկ երբեմնի հայեացքների հակառակ գործել։ Արդ եթէ Ձեր ասածը չէք յիշում, հիմք կար անարգելու իմ մարդկային արժանապատւութիւնը։ Բայց պիտի ընդունիք, որ հեշտութեամբ չեմ մարսի և չեմ վերցնի իմ վրա այն դառն արհամարհանքը, որի առարկայ կամեցաք ինձ դարձնել»։

«Եւ երրորդ՝ եթէ Կարապետ եպիսկոպոսը իր Պետի անխնարկութիւնը համարում էր իրան վիրաւորական և ցանկանում էր հասկացնել Նրան, որ այլևս չէ կարող տանել այդպիսի վիրաւորանք, բաւական պիտի համարէր անմիջապէս դուրս գալ Կաթողիկոսի սենեակից և համառօտ հրաժարական ներկայացնել՝ առանց որևիցէ պատճառաբանութեան և երկարաբանութեան։ Այդպիսի խոհեմ քայլը Նորին Սրբազնութեան լիովին համակրելի կը լինէր թէ Էջմիածնի միաբանութեան և թէ ընդհանուր հայ ժողովրդին։ Այն ժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, եթէ իսկապէս վիրաւորած էլ լինէր Իր օծած եպիսկոպոսին՝ կը փութար ուղղել Իր սխալը, որովհետև անսխալը միայն Աստուած է. թէ որքան ներողամիտ է եղել հանգուցեալ Հայրապետը՝ մենք տեսնում ենք տեղական Գէորգ արքեպիսկոպոսի գրութիւնից, որով Նորին Բարձր Սրբազնութիւնը առաջարկելով Կարապետ եպիսկոպոսին յետ առնել իր հրաժարականը յիշեցնում է, որ այդ ցանկանում էր նաև հանգուցեալ Հայրապետը։

«Խոստովանեցէք, սրբազան Կարապետ եպիսկոպոս, որ ձեր ձգձգած հրաժարականը միայն ձեզ տուած (եթէ տուած է) վիրաւորանքի հետևանք չէ և ընդունեցէք, որ ձեր արած քայլը դէպի հանգուցեալ Մատթէոս Երկրորդ Կաթողիկոսը՝ վայելուչ չէ»։

—

Քանի որ խօսեցինք «Հորիզոն» թերթի մասին, չենք կարող մոռանցոյց չանել այդ թերթի մէջ գործող Յ. Թումանեանի մի նոր տգեղ վարմունքի վրա և հանդէպ «Մշակի»։

«Մշակի» № 3-ում տպված էր Գ. Զալխուշեանի մի յօդուածը «Ճեմարանի և թեմական դպրոցների ապահովութեան մասին», որի մէջ յօդուածագիրը արտայայտում էր այն կարծիքը, որ այժմ հայերից շատերը ունեն։ Տեղը չէ այստեղ և անյարմար է բացատրել, թէ ինչ շարժառիթներից դրդված Գ. Զալխուշեանը, յայտնի մեզ մինչև այսօր իր ազատամիտ և առաջադէմ ուղղութեամբ, ստիպված է տեսել իրան գրել այդ յօդուածը։ Այդ, ի հարկէ, կը բացատրվի ապագայում աւելի նպաստաւոր պայմաններում. բայց Յ. Թումանեանի տգեղ վարմունքը նրա մէջ է կայանում, որ նա միանգամայն զանցառութեան տալով իրա՝ «Մշակի», իբրև խմբագրութեան, յայտարարութիւնը, թէ այդ յօդուածը արտայայտում է լոկ յարգելի հեղինակի անհատական կարծիքը և թէ խմբագրութիւնը առանձին կը յայտնէ իր կարծիքը նրա մի քանի կէտերի մասին (տես «Մշակ» № 4), այնուամենայնիւ թոյլ է տալիս իրան այնպէս ձևացնել, թէ «Մշակը» միանգամայն համամիտ է այդ յօդուածի հետ, որպէս զի կարողանայ յետոյ ասելու, թէ տեսէք ինչ են տպված Գ. Արծրունու թերթում։

«Անշուշտ մարդիկ կը գտնվեն, ինսինուացիա է անում Յ. Թումանեանը, որ չեն հաւատալ, թէ այսպիսի բան կայ տպված հայերէն տառերով. այդպիսիները թող ձեռք բերեն «Մշակ» № 3, էջ 3, կարդան»։

Իսկ մենք կասենք. եթէ դեռ կան մարդիկ, որ ամենափոքր հաւատ են ընծայում Յ. Թումանեանի գրածներին, թող ձեռք բերեն և կարդան «Մշակ» № 4, էջ 3։

Ե՞րբ պէտք է Յ. Թումանեանները դադարեն կեղծիքներ և ստութիւններ կատարելուց։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՏԻԿ. ԴՈՒՐԵԱՆ-ԱՐՄԷՆԵԱՆԻ ԲԵՆԵՖԻՍԸ

Այսօր, յունվարի 20-ին, Արքունական թատրոնում տեղի կունենայ համակրելի դերասանուհի տ. Դուրեան-Արմէնեանի բենեֆիսը։

Պարտք ենք համարում յիշեցնելու հայ հասարակութեան, որ տ. Դուրեան-Արմէնեանը առաջին անգամն է, ինչ թատերական ամբողջ սեզոնի ընթացքում Թիֆլիսում ծառայում է հայ բեմին։

Հայ հասարակութեան սեպուհ պարտականութիւնն է ներկայ գտնվել տիկնոջ բենեֆիսին, որը առաջինն է, մանաւանդ որ յարգելի դերասանուհին մտադիր է մի քանի ամսով ճանապարհորդութիւն կատարել Եւրօպայում, թէ առաջնակարգ բեմական ույժերի խաղերին ներկայ գտնվելու և նրանց ուսումնասիրելու, և թէ կոկորդը բժշկելու, որից յետոյ անշուշտ նրա ձայնը աւելի լաւ կը հնչի մայրենի բեմից, որով նրա այդ փոքրիկ պակասութիւնն էլ վերացած կը լինի։

Ուշադրութեան արժանի է և այն, որ Հանրի Նաւարացի պիէսը, որի մէջ սիմպատիկ դերասանուհին կատարելու է Մարգարիտա Վալուայի դերը, առաջին անգամն է խաղացվում հայ բեմի վրա, իսկ այդ պիէսը շնորհիւ իր հետաքրքրական բովանդակութեան և գեղեցիկ բեմականութեան, թատերական աշխարհում գրաւել է առաջնակարգ տեղերից մէկը, խաղացվելով ամենուրեք բազմաթիւ անգամներ։

Ներկայ տողերը գրելիս, մի բոպէ իսկ չենք կասկածում, որ հայ հասարակութիւնը հանդէպ իր տաղանդաւոր արտիստուհու կիմանայ կատարել իր պարտքը և հոծ բազմութեամբ կը լցնի թատրոնի սրահը. մեր դերը այս դէպքում սոսկ յուշարարի դեր է միայն։

Գնանք ներկայացմանը և մեր ներկայութեամբ խրախուսենք համակրելի դերասանուհուն ու հայ բեմի կարևոր ույժերից մէկին, այսօր, հինգշաբթի յունվարի 20-ին, Արքունական թատրոնում։

A—s

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, 10 յունվարի

«Մշակի» 3-րդ համարում «Ժամանակ» թերթից արտատպված բարեշնորհ Պալաքեան վ.-ի յօդուածում ի միջի այլոց ասված է, որ իբր թէ հանգուցեալ երջանկայիշատակ Մատթէոս Բ. Կաթողիկոսն իր՝ յանուն Նորին Կայսերական Մեծութեան գրած հրաժարական հեռագիրը ինձ է յանձնել օծումից 5 օր առաջ և հրամայել թարգմանել ռուսերէն ու տանել Իրան ստորագրելու համար։

Ցաւալով եմ հաղորդել ի գիտութիւն հայ հասարակութեան, որ հանգուցեալ Վեհափառ Կաթողիկոսն այդպիսի հրաժարական երբէք ինձ չէ յանձնել և ոչ էլ ինձ հետ այդ մասին խօսք է ունեցել Հոգևոր Տէրը։

Հետևապէս Պալաքեան վարդապետի այդ հեռագրի մասին հաղորդած լուրը բացարձակ մտացածին է։ Բարգէն վարդապետ

—

Դղլի-Արվադ, 30 դեկտեմբերի 1910 թ.

Ի Տէր հանգուցեալ Ամենայն Հայոց Կաթողիկոս Իզմիրլեանի յիշատակը շօշափելի կերպով յարգած լինելու նպատակով հայութեան կենտրոնից անջատված այս փոքրիկ գաղութի մէջ՝ առաջարկեցի տեղիս սակաւաթիւ երիտասարդներին մի համեստ գումար յատկացնել դպրոցին կից ազգային գրադարանի համար պարբերական հրատարակութիւններ ստանալու, այնպէս որ բոլորն էլ անխտիր կարողանան օգտվել դրանցից։ Օր. օր. Ս. Ցրտատարեան և Մ. Դուլգարեան սիրայօժար կերպով յանձն առան և հանգանակեցին 27 ր. 60 կ., որպիսի գումարը և փոխադրվեց զանազան խմբագրութիւններ։ Բացի այդ, երիտասարդութիւնը և համակրող անձինք խոստանում են որոշ նպաստով և կողմնակի միջոցներով ապահովել այս գեղեցիկ գործի յարատևութիւնը։ Առայժմ ստացվելու են հետևեալ հրատարակութիւնները. «Մշակ», «Արօր», «Հորիզոն», «Սուրհանդակ-Խաթաբալա», «Աղբիւր-Տարազ», «Հասկեր» և «Գիւղատնտես». իսկ ռուսերէն, „Русск. Слово“ և „Природа и Люди“։

Յայտնում եմ հրապարակով խորին շնորհակալութիւնս գործին նպաստող օրիորդներին և պարոններին, որոնք, ըմբռնելով մայրենի գրականութեան արժէքը և նշանակութիւնը, մանաւանդ մի այսպիսի շրջանում, այնքան ջերմ կերպով արձագանք տուին մեր կոչին։

Դղլի-Արվադի հայոց ծխ. երկս. դպրոցի
ուս.-ուս. Բնն. Ցրտատարեան

ԲՆՈՐՈՇ ԱՌԱՋԱՐԿ

Անցեալները «Սուրհանդակ» թերթը հրապարակ հանեց Թիֆլիսի թեմի համար երկու առաջնորդացուի՝ այն է՝ Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանցի և Մեսրովբ եպիսկոպոս Տէր-Մովսէսեանի անունները, ու թէ մէկին և թէ միւսին՝ «ըստ ամենայնի յարմար» էր գտնում մեր թեմի համար («Սուր. № 190). իր այս հաւանած երկու անձի թեկնածութիւնն արդարացնելու համար «Սուրհանդակը» մեղանչում է ճշմարտութեան դէմ, շեշտելով՝ «Ներկայումս Թիֆլիսում երկու որոշ հոսանք կայ, որոնք այդ երկու բարձրաստիճան եպիսկոպոսների թեկնածութիւնը կը պաշտպանեն», այն ինչ մեզ յայտնի է, որ Թիֆլիսում ոչ թէ երկու, այլ աւելին թողած՝ երեք որոշ հոսանք կայ. մինը՝ պահպանողականների, միւսը առաջադիմականների և երրորդը՝ «մեր տղաների» կամ այսպէս ասած՝ «նոր սերնդականների» հոսանքը։

Որ Սուքիաս արքեպիսկոպոսը կարող է լինել պահպանողականների արժանաւոր ընտրելի—շատ հասկանալի է։ Նա՝ Սուքիաս արքեպիսկոպոսը՝ իր որոշ հայեացքներով, իր ունեցած բնաւորութեամբ, իր հմուտ եկեղեցագիտութեամբ միանգամայն ցանկալի, չափած ու ձևած թեկնածուն է պահպանողականների և, եթէ այս վերջիններս անձնական հաշիւներով չառաջնորդվեն, պէտք է առանց իրար մէջ բաժանվելու պաշտպանեն Սուքիաս արքեպիսկոպոսի թեկնածութիւնը։ Սա կը լինի իրանց ուղղութեան համապատասխան քայլ։

Մեսրովբ եպիսկոպոսը՝ իր անորոշ հայեացքներով, իր դիւրքատենչ բնաւորութեամբ, եկեղեցագիտութեան մէջ իր անծայր բոբիկութեամբ ոչ ոքի թեկնածու լինել չէ կարող։ Նրա հայեացքների անորոշութիւնը և «դիւրքատենչ» նրա բնաւորութիւնը, նոյն իսկ «մեր տղէքի» աչքում շատ էլ ցանկալի ու գնահատելի լինել չէ կարող. նրանց որոնածը իրանց հրամանների լուրկ կամակատարը, կամազուրկ գրաստը, հոգևորական տարազի փայլով շառացող դատարկութիւնը պիտի լինի։

Գալով առաջադիմականներին — նրանք բնաւ չեն կարող պաշտպանել ոչ Սուքիաս արքեպիսկոպոսին և ոչ մանաւանդ Մեսրովբ եպիսկոպոսին։ Նրանց որոնածը մեր ազգային ժողովրդավարական հոգին լաւ ըմբռնող, կենդանի գործունէութեամբ շնչաւորող, մեր եկեղեցական կեանքի վրա հիւսված սարդի ոստայնները բարձող, փոշիները մաքրող, մեր ընտրական կեանքը խափանող, խեղդող բաղեղները հարազատօրէն ու հմտօրէն ի բաց խլող շիտակ, գիտուն, մաքուր հայ հոգևորականը, հայ անձն է։ Հետևապէս առաջադիմականները չեն կարող պաշտպանել ոչ պահպանողականների և ոչ «մեր տղաների» ձգտումներին համապատասխանող թեկնածուներին։

Այս այսպէս լինելուց յետոյ, մեզ համար հանդիսանում է «շատ բնորոշ» այն հանգամանքը, որ «անկուսակցական» «Սուրհանդակը» Սուքիաս և Մեսրովբ եպիսկոպոսների նման միմեանց միանգամայն հակապատկեր հանդիսացող անձերին՝ միաժամանակ «ըստ ամենայնի շատ մօտ» է գտնում թեմի առաջնորդութեան համար։

Արդեօք Թիֆլիսի թեմի արժանաւոր առաջնորդից ինչպիսի դրական, ցանկալի սպասելիքներ է ակնկալում «Սուրհանդակը», որ հաւասար արժանաւոր է գտնում թէ Սուքիաս արքին և թէ Մեսրովբ եպիսկոպոսին։

Ս. Սուքիասն այն հոգևորականն է, որ եթէ լինէր հոգևոր ճեմարանի տեսուչ, չէր կարող թոյլ տալ, որ կրօնական առարկաները սղվին, իսկ եթէ սղէին, նա կը ձգէր դառնացած ու կը հեռանար պաշտօնից, բայց Մեսրովբը թէ թոյլ տուեց որ սղեն և թէ մնալով տեսուչ՝ վկայեց իր բնաւորութիւնը։

Ս. Սուքիասն այն հոգևորականն է, որ քաջատեղեակ մեր եկեղեցու արարողութեանը, ոչ միայն խստութեամբ ճշտակատար է լինում, այլ և նոյնը պահանջում է իր բոլոր ստորադրեալներից, ոչ միայն այս, այլ և նոյնն անթերի կատարելու պահանջ, զգացում է ներշնչում իր բոլոր հոգևոր պաշտօնեաներին, իսկ Մեսրովբը՝ միանգամայն անտեղեակ արարողութիւններին՝ անգէտ նոյնիսկ ցուցամատն ու բոյթը գործադրելու տարրական պահանջին, նա ոչ միայն իրաւունք չը պիտի ունենայ ճշդապահութիւն պահանջելու իր ստորադրեալներից, այլ և ակամայ իր անձով և իր օրինակով պիտի խախտ ու խայտառակ շփոթութիւնների պզոտայ բանայ այդ խնդիրներում ստորադաս հոգևորականների առաջ։

Այդ, մի՞թէ «Սուրհանդակի» համար այդ երկու ծայրընդդէմ յատկութիւնները միևնոյն արժէքն ունեն։

Կանգ ենք առնում։ Հարկ չը կայ անհամեմատներին համեմատելու։

Ցաւ է, ցաւ, որ անձնական յարաբերութիւնների կշռաքարերն են նետվում կշռքի թաթի մէջ, հասարակական գործիչներին կշռելու նպատակով, փոխանակ «սկզբունքային», փոխանակ «ծրագրական», փոխանակ «հանրային» կշռաքարերի։

Եւ «Սուրհանդակի» առաջարկը մեր ցաւոտ իրականութեան խիստ բնորոշ արտայայտիչն է։

Ա. Տ. Ց.

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ *)

I

„Рус. Вѣд.“ թերթի մէջ «Ամպեր հորիզոնի վրա» վերնագրով թղթակցութեան մէջ Ր. Ն.-ը նկարագրում է Թիւրքիայի ներկայ պարլամենտի պատկերը, որ մենք քիչ կրճատումներով տալիս ենք «Մշակի» ընթերցողներին։

«Ուրախ չը մտաւ երիտասարդ Թիւրքիան նոր տարվայ մէջ։ Ճիշդ է, պարլամենտական փոթորիկները անցել են, սակայն հասարակութեան տրամադրութիւնը յուզալի է։ Լուրեր են տարածվում հասարակութեան և մամուլի մէջ «Միութիւն և Առաջադիմութիւն» կուսակցութեան անդամների միջև նկատվող խռովութիւնների մասին, նրանց փոթորկալից ժողովների մասին, երբ անդամներից շատերը դառն յանդիմանութիւններ են շպրտում իրանց ղեկավարներին և պարագլուխներին, որոնք այժմ մինիստրական պաշտօններ ունեն, և պահանջում են հեռանալ պաշտօնից։ Կուսակցութեան մէջ տիրող դիսցիպլինան, որ մինչև այժմս էլ շատ խիստ չէր, օրից օր աւելի է ընկնում։ Մի շարք դէպքերում «Միութեան» անդամները խուսափել են իրանց ձայները տալուց կամ տուել են հակառակ կառավարութեան, այնպէս որ ներկայումս կառավարութիւնը բոլորովին հաւաստի չէ կարող լինել «իր մեծամասնութեան» վրա։

«Պարլամենտական մեծամասնութեան մէջ սկսվող այդ քայքայումը չէ կարելի բացատրել ընդդիմադիր կուսակցութեան բարոյական յաղթութիւններով։ Այն անձերը, որոնք առանց կանխակալ կարծիքների հետևել են թիւրքական պարլամենտական կեանքին, լաւ գիտեն, որ թիւրք ընդդիմադիր կուսակցութիւնը կատարելապէս սնանկ է։ Նա չունի ո՛չ բոլորին ի մի հաւաքող ընդունակ ղեկավարներ և ոչ էլ—ու դա գլխաւորն է,—մի մտածած քաղաքական ծրագիր։ Օպպօզիցիայի շարքում կան զանազան տարրեր, որոնց մեծամասնութեան քաղաքական դաւանանքը (credo) նա է, թէ պետական գործը իրանց ձեռքերում աւելի լաւ կընթանար։ Ըստ հին ասացուածքի՝ «Տեղիցդ վեր կաց, որ ես այնտեղ նստեմ»։

«Մեծամասնութիւն կազմող կուսակցութեան թուլութեան մէջ մեղաւոր է նախ և առաջ ինքը կուսակցութիւնը. Նրա շարքերում պակասում են և խոշոր տաղանդներ և նա էլ, օպպօզիցիայի նման, չունի որոշ և պարզ քաղաքական ծրագիր։ Բայց կայ և մի այլ պատճառ կուսակցութեան մէջ տիրող մտքի անբաւականութեան և անտանելի փոխադարձ անհամաձայնութեան։ Այդ պատճառը աւելի լուրջ է։ Դժուար է նախատեսել, որ կառավարութիւնը կարողանայ դիւրութեամբ հեռացնել նրան, իսկ նրա գոյութիւնը սպառնում է այնպիսի բարդութիւններով, որ չը սահմանափակելով միջկուսակցական ընդհարումներով, հզօր արձագանք կարող է գտնել ամբողջ երկրի մէջ։

II

«Եթէ ես ուզենայի պատկերացնել այժմեան մոմենտը, ապա ես կասէի, որ գաւառն արշաւում է պարլամենտի դէմ։ Այն մուրացկան, տգէտ գաւառը, որ հաւատաց նոր մարդկանց, նրանցից էր սպասում անմիջական օգնութիւն իր ցաւերին և որը մինչև օրս ոչինչ չէ շահել։ Այն գաւառը, որին չեն բաւականացնում ազատութեան, հաւասարութեան և եղբայրութեան մասին վերացական դատողութիւնները, այլ որը ուզում է ճանապարհներ, քանի որ սրանց բացակայութիւնից տնտեսապէս տուժում է, ուզում է ուսումնարաններ, որովհետև անգրագէտ է, չէ հասկանում մայրաքաղաքում հրատարակած գրքոյկները, լրագիրները, բժիշկներ է ուզում նա, քանի որ ամենաթոյլ տարափոխիկ հիւանդութիւնը կոտորում է նրա երեխաներին։ Դժուար է հանգստացնել գաւառը մատնանշելով սահմանադրական կարգերի ամրանալը, ժողովրդական գիտակցութեան առաջադիմելը։ Առաջին գլուխ գաւառը պահանջում է անձի և կայքի ապահովութիւն, իսկ Ալբանիան անհանգիստ է, Մակեդոնիան ահաբեկված է չետաներից, Սիրիայում՝ Խաուրանում պատերազմ է, Արաբիայում զօրքերը անդադար ընդհարվում են թափառական ցեղերի հետ, իսկ Յորդանանի մօտերը բեդուինները գերում են նոյնիսկ քաղաքներ...

«Այս լայնատարած, խայտաբղէտ երկրի մէջ, որ վեց անգամ մեծ է Ֆրանսիայից, որտեղ ամբողջ նահանգներ բնակեցված են վայրենի թափառական ցեղերով, երիտասարդ-թիւրքերը եկան մի դժուար իրագործելի ծրագրով. ստեղծել պետականութիւն, այն էլ կենտրոնացրած, բարեկարգ ոստիկանական ոյժերով, բայց առանց տեղական ինքնավարութեան։ Պարզ է, թէ ինչ կոնֆլիկտներ անխուսափելիօրէն պիտի առաջանար նրանց պահանջների և երկրի կենցաղի իրական պայմանների միջև։

«Հանապազօրեայ դէպքերը ամեն քայլում հաստատում են այն տրագիքական կոնֆլիկտը, որ տեղի պիտի ունենար նոր մարդկանց մտքերի և ձգտումների և այդ իղձերը իրականացնող ու նրանց ձեռքի տակ եղած միջոցների մէջ։ Եւ արտաքին, նիւթական անպատրաստականութեան հետ միասին հանդէպ եկաւ և ներքին անպատրաստականութիւն։ «Միութիւն և Առաջադիմութիւն» կուսակցութիւնը հէնց սկզբից հակառակ դուրս եկաւ «ապակենտրոնացման և մասնաւոր ձեռներէցութեան քաջալերման» ծրագրին, որի պաշտպանն էր Սաբահէդդինը, կոմիտէտի հիմնողներից և նախկին ղեկավարներից մէկը։ Հրաժարվելով Սաբահէդդինի ծրագրից, երիտասարդ-թիւրքերը գաւառի համար չառաջարկեցին իրանցը, և նահանգների կառավարութիւնը շարունակվում է հին ձևով, այն զանազանութեամբ միայն, որ նոր կառավարութիւնը աշխատում է այդ տեղերը նշանակել ազնիւ, յարգելի պաշտօնեաներ։ Բայց նոր մարդիկը ո՛չ մայրաքաղաքում, ո՛չ գաւառում ցոյց չը տուին առանձին ընդունակութիւններ և ներկայումս գաւառը տքնում է աբդիւլ-համիդական ծանր ժառանգութեան տակ...

«Բայց և այնպէս նոր րէժիմի օրով գաւառը զգաց, որ նոր շրջանը բերել է և իր համար մի ինչ-որ նոր բան և դրանից առաջնագոյնը՝ իրաւունք գոռալ ժողովրդական կարիքների, գաւառի քայքայված դրութեան մասին, և նա գոչում է, կանչում է։ Պատգամաւորներն էլ երկար արձակուրդի միջոցին գնալով գաւառները, շփվելով հասարակութեան հետ, վերադարձել են Կ. Պօլիս, բերելով իրանց հետ սպասելուց յոգնած գաւառի գանգատները, անբաւականութիւնները... Եւ նրանք, պատգամաւորները, հայրենիքում վարակվել են իրանց ընտրողների անհամբերութեամբ, ու ներկայումս «Միութեան և Առաջադիմութեան» հաւատարիմ ճանաչված անդամները չեն ծածկում իրանց համակրանքը դէպի ընդդիմադիր կուսակցութեան խիստ կրիտիկան։

«Վայրկեանը լուրջ է, քանի որ վերջ ի վերջոյ ներկայումս «Միութիւն և Առաջադիմութիւն» կուսակցութիւնը միակ կազմակերպված ոյժն է և երկրի մէջ, նրա վրա է յենվում նոր րէժիմը և նրա թուլանալը անփոփ ցաւ է այն ամենքի համար, որոնք հաւատում են Թիւրքիայի յետագայ խաղաղ զարգացմանը...

«Այն ծայրայեղ յոռետեսութիւնը, որով տեղս շատերը դատում են երկրի դրութեան մասին, գուշակելով անգամ սահմանադրական կարգերի վերջը և զինուորական դիկտատուրայի անխուսափելիութիւնը, ինձ համար թւում է շատ չափազանցացված և անհիմն։ Բայց ես էլ կասեմ, որ վայրկեանը անշուշտ լուրջ է։

«Տարօրինակ զգացմունք է բարձրանում հոգուս մէջ, երբ ես նստած եմ լինում թիւրքական պարլամենտի փոքրիկ, անձուկ դահլիճի մէջ։ Ինչպէս գիտէք, պարլամենտի նախկին շէնութիւնը՝ Չարաղանի փառահեղ պալատը, Կ. Պօլսի ամենագեղեցիկ շէնքերից մէկը, այրվել է և պարլամենտը փոխադրվել է կայսերական տան իշխանուհիներից մէկի «կօնակը», որ իշխանուհին յօժարակամ «նուիրաբերել է ազգին»։ Այդ պալատը գտնվում է հէնց Բօսֆորի ափին։ Նրա լուսամուտներից բացվում է մի հրաշալի տեսարան, հանգիստ ու անդորր։ Այդ դահլիճում դեռ ոչ շատ վաղ մինչև հանդարտութիւն և խաղաղութիւն էր տիրում, հազիւ լսելի խշշում էին իշխանուհիների կերպասէ հագուստները, նազելի հնչում էին արևելեան երգի մտամոլոր տարփալից մօտիվները և ծոյլ ընթանում էր չափաւորված, ջերմանոցային կեանքը՝ բաժանված աղմկայոյզ իրականութիւնից վանդակապատ լուսամուտներով ու ներքինիների խմբերով... Իսկ այժմ՝ այդ նոյն դահլիճում թնդում են աղմկալի վայրացկոտ ճառեր, տեղի է ունենում քաղաքական կրքերի և ախորժակի պայքարը, և Թիւրքիայում առաջին անգամ այս նախկին հարեմում պաշտօնապէս ձևակերպվում են թիւրք պրօլետարիատի պահանջները՝ հայ և բուլղար պատգամաւորների բերանով...

«Եւ թւում է, որ հին յեղափոխութեամբ վախեցրած կեանքը այս տեղից դեռ չէ հեռացել, որ նա թաքնվել և սպասում է. ճիշդ է այս ամենը, երկարակեաց է սա, չի՞ երևալ արդեօք մի մեծ, քաջ բեյ, չի՞ քշի նա այս օտար, նոր մարդկանց ժողովը։ Եւ կրկին կը փակվեն լուսամուտները վանդակներով և նորից հարեմի անդորր դահլիճներում կընթանայ խաղաղ, ծոյլ, ճերմանոցային կենցաղը»...

Թարգ. Պ. Զ.

---

*) Աւելորդ օգուտ քաղելով չենք կարող մոռանցոյց չանել մեր մամուլի մի խոշոր պակասութեան վրա, որի մասին մենք մի այլ տեղ գրել ենք աւելի մանրամասնօրէն («Անկախ Մամուլ» 1908 թ. № 1)։ Հայ մամուլը առհասարակ քիչ ուշադրութիւն է դարձրել հայերի մեծամասնութեան բնակած երկրների համապետական հարցերին, հարցեր, որոնք սակայն մեծ ազդեցութիւն են ուղղակի թէ անուղղակի իրանց ազգային թէ նիւթական, թէ բարոյական կեանքի վրա։ Ճիշդ է, վերջերս այդ պակասութիւնը նշանաւոր չափով չքանում է շնորհիւ ամենուրեք հաստատված սահմանադրական կարգերի, որ հարկադրում են բոլոր քաղաքացիներին այս կամ այն կերպ ներգործական դեր կատարել ընդհանուր պետական կեանքում։

Մամուլի յիշածս պակասութիւնը աւելի ևս զգալի է թիւրքահայերի մէջ։ Տարիների ընթացքում «Մշակի» նախաձեռնութեամբ ռուսահայ լրագրութեան մէջ Պօլսական նամակներում դուք միշտ կարդացել էք ազգային ժողովի մասին, պատրիարքարանի շուրջ կատարվող երևոյթների մասին և շատ քիչ հերթական ընդհանուր պետական հարցերի մասին։ Այդ կողմից բացառութիւն կազմում են «Մշակի» թղթակից Arago-ի գրածները։

Թիւրքական անարիւն յեղափոխութիւնը պսակվելուց յետոյ, երբ երկիրը դէպի իրան հրաւիրեց ընդհանուր մամուլի ուշադրութիւնը։ «Մշակը» ևս զգալով ակնարկածս պակասութիւնը, աշխատել է աչքաթող չանել եւրոպական մամուլում երևացող գրութիւնները Թիւրքիայի (և Պարսկաստանի) վերաբերեալ, մի գործ, որ նա շարունակելու է և ապագայում։ Պ. Զ.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Երիտասարդ-թիւրքերի առաջին ծովային ցոյցը վերջացաւ աջողութեամբ։

◆ Կ. Պօլսից հեռագրում են, որ գահաժառանգ պրինց Իւսուֆ Իզզէդդին-էֆէնդին մտադիր է շուտով այցելել Հռոմ։ Այդ այցելութեան նպատակը կապում են այն խնդրի հետ՝ թէ թիւրքաց կառավարութիւնը մտադրութիւն ունի 350 միլիոն ֆրանկի նոր փոխառութիւն կնքել Ֆրանսիայում։ Հռոմ այցելելուց յետոյ պրինցը այդ նպատակով գնալու է Պարիզ։ Սենսացիա է առաջ բերում այն լուրը, երբ պրինցը ճանապարհին Սալօնիկում տեսնելու է Աբդիւլ-Համիդին։

◆ Ռուսական պետութեան բժշկական մասը վերակազմելու յատուկ խորհրդակցութիւնը ներքին գործերի մինիստրի օգնական Կրիժանօվսկիի նախագահութեամբ յունվարի 13-ի նիստում ձեռնարկեց քննելու ժողովրդական առողջութեան պահպանութեան մինիստրութիւն հաստատելու հարցը։

◆ Ռուսաց սահմանապահ զինուորների և աւստրիական ժանդարմների միջև տեղի է ունեցել ընդհարում. հրացանաձգութեան ժամանակ սպանվել է մի ռուս։ Վիէննայի տեղեկութիւնների համաձայն սկզբնապատճառը եղել է ռուսների վարմունքը։

◆ Ֆրանսիական դեսպան Պետերբուրգում մտադրութիւն կայ նշանակել Կամբօնին։

◆ „Рус. Вѣд.“ Խարբինի թղթակիցը հեռագրում է. «Խարբինում և շրջակայ գիւղերում ժանտախտը օրից օր աճում է։ Չը կայ համաձայնութիւն տեղական վարչութեան ներկայացուցիչների մէջ։ Անհրաժեշտ միջոցներ ձեռք չեն առնվում։ Խարբինի շրջապատելը ռուս զօրքերով, իսկ Ֆուձադեանի՝ չինացիներով չէ հասնում իր նպատակին։ Բազարը չումայով վարակված է։ Գեօմալխանձորի կոյտերի մէջ գտել են ախտով մեռածի դիակ։ Նոյնպէս վարակված է այն հացը, որ շրջակայքից բերվում է Խարբին։ Մոտակայ գիւղերում չինացի մշակների դիակները թափված են, դագաղները չեն թաղվում, այլ ձգված են Սունգարիի և Խուլէի ափերին. գարնանը գետերը յորդանալով անշուշտ վարակվելու են դրանցով։ Քաղաքից գնացող կողմեր տանող ճանապարհների վրա թափված են դիակներ, որոնց յօշոտում են շները։ Ախտով բռնված տեղերից Խարբին են թափվում բազմաթիւ չինացիներ։ Եւրօպացիները հնար չունեն խուսափել չինացիների հետ շփվելուց։ Պահպանվել ախտից կատարելապէս անհնարին է։ Չէ կարելի նկարագրել սարսափը։ Ամենքը գործերը թողած փախչում են։ Աշխատանոցներում բանող ռուս բանւորները, վախենալով վարակվել չինացիներից, գործի չեն կանգնում։ Անհրաժեշտ են թէ միջոցներ և թէ հարկադրումն տեղական իշխանութեան, որպէսզի ձեռք առնվեն խիստ միջոցներ։ Անհրաժեշտ է համարվում հսկողութիւն սահմանել չինացիների վրա, այրել ախտով բռնված քաղաքամասերը, հաստատել ամենօրեայ բժշկական քննութիւն չինացի բնակչութեան վերաբերեալ, սաստկացնել սանիտարական հսկողութիւնը, արմատականապէս մաքրել քաղաքը, առանձնացնել Խարբինը հարևան վարակված տեղերից՝ երկարատև կարանտին սահմանելով։ Ժամանակ է սթափվել չինական կառավարութեանը, որ կտրական միջոցների դիմի ախտի դէմ կռվելու ասպարիզում։ Եթէ այս բոլորը ի կատար չածվի, ապա գարնանը պատուհասը կարող է միջնադարեան արհաւիրքների չափին հասնել։ Իրականութիւնը սարսափելի է։ Հարկաւոր են անյետաձգելի, ամենավճռական գործողութիւններ, հակառակ դէպքում կորուստի կը մատնվի ամբողջ երկիրը»։

◆ Մոսկվայի քաղաքային ինքնավարութիւնը փոխառութիւն է ուզում առնել 29½ միլիոն ռուբլի, ժողովրդական լուսաւորութեան գործի համար։

◆ Հիւսիս-գերմանական Լլօյդը Թիւրքիային վաճառեց «Օլդենբուրգ» և «Դարմշտադտ» շոգենաւերը։ Յանձնումը կը կատարվի՝ երբ թիւրքական յատուկ մասնաժող կը տեսնէ նրանց։

◆ Բէլգրադի մաքսատունը գրաւեց 400,000 պիստոն հին ձևի՝ զինուորական հրացանների համար, որոնք փակված էին իւղի արկղների մէջ։ Ապրանքը ուղարկվելու էր Մարօկկօ։

◆ Եւրօպական դիպլօմատները պատրաստվում են առաջադրութիւն անել եապօնական կառավարութեան՝ «Ասիայի վերածնութեան» ընկերութեան ագիտացիայի առիթով։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathien -ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11. (երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տել. № 1067.
(օ. մ.) 1179. 100—54

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ Մարիամեան - Յովնանեան ուսումնարանի երրորդ դասատան ՆԱԽԿԻՆ մի որբ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ, 17 տարեկան, կամենում է հայ ընտանիքում ՊԱՇՏՕՆ ՍՏԱՆԱԼ, չափաւոր վարձատրութեամբ, ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՀԱՅԵՐԷՆ ՍՈՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ։
Պայմանների մասին հարցնել Գալուստ քահանայ Աբուլեանին, Гановская № 3.
(օ. մ.) 59. 3—2

ԶԳԵՍՏ 2 ՌՈՒԲԼՈՎ
2 զգեստ 4 ռուբլով։ Տղամարդ. հագուստ. շրջանում նորութիւն է «Ջէվիօտ-Օլիմպը»։ Այնպիսի էժան գնով ինչպիսին 2 ռուբլին է, 4¼ արշ. կտորը տղամ. ամբողջ կօստիւմի համար՝ ոչնչով չէ տարբերվում արշ. 2—3 ր. արժեցող կտորից և ունի վերջինիս բոլոր յատկութիւնները, այն է՝ բարձր սակի ամրութիւն, գործնականութիւն և էլեգանտութիւն։ Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Ուղարկ. է այդպիսի 2 կտոր 4 ռուբլով, ճանապարհածախք՝ 70 կ., պօստով, վերադիր վճ. և առանց կանխավճ.։ 4 և աւելի կտոր բերել տալուց ճանապարհածախքը ֆաբրիկայի հաշւին։ Առանց ռիսկի, լրիւ երաշխ., եթէ չը հաւանվի՝ յետ է վերցվում։ Պահանջները հասցէագրել. г. ЛОДЗЬ, к. въ фабрику шерстяныхъ издѣлій ЗИГМУНТА РОЗЕНТАЛЯ.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(ա. օ.) (В.5255) 41. 10—4

ԱՅԼԵՒՍ ՀԱՐԿԱՒՈՐ ՉԷՆ
ԳԵՐԵԶՄԱՆՔ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ
ԿԱՐԴԱՑԷՔ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԵՂՔԵՐ
տղամարդկանց և կանանց նկարներով, աշխատութիւն բժշկականութեան դոկտոր, նեարդային հիւանդութիւնների նեարդաբանութեան Նիւ-Եօրքում, պրոֆ. Վիլեամ Համոնդի
ԳԻՆՆ է պօստի ծախքով 1 ր. 25 կ.
Դիմել՝ Тифлисъ, Книжный Магазинъ „Гуттенбергъ“, Г. И. Галустяну.
(օ. մ.) 51. 3—3

ԶԳԵՍՏ 2 ՌՈՒԲԼՈՎ
2 զգեստ 4 ռուբլով։ Տղամ. հագուստ. շրջանում նորութիւն է «Տրիկօ-Կօլումբը»։ Այնպիսի էժան գնով՝ ինչպիսին 2 ռուբ. (լաւ տեսակը՝ 2 ր. 50 կ.) ամբողջ 4¼ արշ., տղամ. կօստիւմի համար, ոչնչով չէ տարբերվում արշինը 2—3 ր. արժեցող կտորից և ունի վերջինիս բոլոր յատկութիւնները, այն է՝ բարձր յատկութիւն, գործնականութիւն և էլեգանտութիւն։ Գոյները, սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն, ձիթագոյն։ Ուղարկ. է այդպիսի 2 կտոր 4 ռուբ. (լաւ տեսակը 5 ռուբ.) և ճանապարհածախք 70 կ., պօստով, վերադիր վճ. և առանց կանխավճարի։ 4 և աւելի կտոր բերել տալուց, ճանապարհածախքը ֆաբրիկայի հաշւին։ Առանց ռիսկի, լրիւ երաշխ., եթէ չը հաւանվի, յետ ենք վերցնում։ Պահանջները հասցէագրել. г. ЛОДЗЬ, л. въ фабрику шерстяныхъ издѣлій ЗИГМУНТА РОЗЕНТАЛЯ.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(ա. օ.) (В. 5300) 42. 10—4

Լոյս տեսաւ
Բժշկապետ Ա. ՔԱՔՈՒՑԵԱՆԻ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ
Գիրք Բ., գինը 40 կոպ.։
Նոյնի մասն առաջին արժէ 50 կ., երկու մասերը միասին գնողները ճանապարհածախք չեն վճարում։ Պահեստը Թիֆլիսում «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցում։
(օ. մ.) 55. 4—2

ԶԳԵՍՏ 2 ՌՈՒԲԼՈՎ
2 կօստիւմ 4 ռուբլով։ Տղամ. հագուստի շրջանում «Ջէվիօտ-Օլիմպը» և «Տրիկօ-Կօլումբը» նորութիւններ են։ Այնպիսի էժան գնով, այն է 2 ռուբ. 4¼ արշ. կտորը, տղամ. ամբողջ կօստիւմի համար, ոչնչով չէ տարբերվում արշ. 2—3 ր. արժեցող կտորից և ունի նրա բոլոր յատկութիւնները, այն է խիստ դիմացկունութիւն, գործնականութիւն և էլեգանտութիւն։ Գոյները՝ սև, մուգ-կապոյտ, շագանակագոյն և ձիթագոյն։ Այդպիսի 2 կտորը ուղ. ենք 4 ր., հաշւելով ճանապարհածախք 70 կ., պօստով, վերադիր վճ., առանց կանխավճ.։ 4 և աւելի կտոր բերել տալուց ճանապարհածախքը ֆաբրիկայի հաշւին։ Ուղարկ. ենք նաև տղամ. ամբողջ զգեստացուներ—2 ր. 75 կ., 3 ր. 95 կ., 5 ր. 25 կ., 8 ր., 12 ր., 15 ր. 30 կ. իւրաքանչիւր կտորը։ Առանց ռիսկի, լրիւ երաշխաւորութիւն։ Եթէ չը հաւանվի՝ յետ ենք վերցնում։ Պահանջները հասցէագրել. г. ЛОДЗЬ, м. въ фабрику шерстяныхъ издѣлій ЗИГМУНТА РОЗЕНТАЛЯ.
Թղթակցութիւնները ռուսերէն։
(ա. օ.) (В.5323) 43. 10—4

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ
ԹԻՖԼԻՍԻ ԲՈՐՍԱՅԻՆ ԱՐՏԵԼԸ
Առաջարկում է ամեն կարգի առևտրի համար պատասխանատու աշխատակիցներ։ Համաձայն կանոնագրքի § 2-ի վերցնում է իր վրա՝ ապրանքների և տնային կահկարասիքի ընդունելը և ուղարկելը։
Կատարում է զանազան առևտրական հիմնարկութիւնների և մասնաւոր անձանց յանձնարարութիւններ։
Վերոյիշեալ օպէրացիաները կատարում է Թիֆլիսում գոյութիւն ունեցող գներից պակաս։ Հաստատութիւնների, յայտնի ֆիրմաների ու անձանց համար, որոնք օգտվում են առանձին վստահութեամբ, Արտէլը բոլոր ծախսը (երկաթուղու ֆրախտ, կայարանային մշակների վարձ և այլն) անում է Արտէլի գումարից, որը և մաս-մաս ստանում է կլիենտներից, նայելով գումարին։
Բոլոր վնասների համար պատասխանատու է Բորսային կոմիտէի տրամադրութեան տակ գտնվող իր պահեստի և միւս բոլոր դրամագլուխներով։
Նոր անդամների ընդունելութիւնը շարունակվում է։
Վարչութիւն. Արմեանսկի բազար, տուն Փոխ. Վարկի Ընկ., № 6, տելէֆօն 348.
(1, 6, 20) 1449. 3—3

Առևտրի եւ Արդիւնաբերութեան մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 24/2.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Գործնական գրագրութիւնները կատարվում են կուրսերում՝ Լոնդոնի Pitman և Պարիզի Pigier գպրոցների ձևով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են ռէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրան., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանօնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումը). բ) ոչ պարտադիր. 1) օտար լեզուներ. 2) սղագրութիւն. 3) դակտիլոգրաֆիա (ռեմինգտոն և այլ.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Պարապմունքները կատարվում են և զատ-զատ։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը 10—12 և 4—7 ժամը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքերում։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ա.օ.) 24. 0—9

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.